

**Ի Ն Չ Պ Ե Ս Պ Ե Տ Ք Ե Ա Շ Խ Ա Տ Ի
Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Չ Ի (Կ Ա Ր Մ Ի Ր Մ Ա Ջ Ի Կ Ի)
Ս Կ Ջ Բ Ն Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը**

614
4-33

20.05.2013

20 JUL 2010

Հարմիր է աչի յեզ Կարմիր Մահիկի ընկերությունների
միության գործադիր կոմիտե


614 433
4-33

Ի Ն Չ Պ Ե Ս Պ Ե Տ Բ Ե Ա Թ Խ Ա Տ Ի
Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Չ Ի (Կ Ա Ր Մ Ի Ր Մ Ա Ջ Ի Կ Ի)
Ս Կ Ջ Բ Ն Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

4017
4046

614.88

ՀԵՍՆ ՊԵՏՍ.ԿՍ.Ն ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ



1936

Քարգւ. Գ. ԱՔԱՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Գ. ՋԵՆՅԱՆ
Մտնագրիչ՝ Ա. ԱՐՁԱՒԱՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԱՏԵՂԾԵԼ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ (ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ)
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Կարմիր Ուաշի կոմիտեյի կազմակերպման նախաձեռնու-
թյունը ձեռնարկութեան, կոլանտեսութեան, խորհանտեսութեան
մեջ, ՄՏԿայանում, բնակվարձկոտպում, հիմնարկութեան մեջ
կարող է իր վրա վերցնել սովյալ կոլեկտիվի ամեն մի անդամ:

Կոմիտեյի կազմակերպման համար պետք է համապատաս-
խան նախապատրաստական աշխատանք տանել: Անհրաժեշտ է
պայմանավորվել ղեկավար կազմակերպությունների հետ, վոր-
պեսզի մոտակա ընդհանուր ժողովի որակարգի մեջ մտցվի
սովյալ ձեռնարկութեան մեջ Կարմիր Ուաշի (Կարմիր Մահիկի)
ընկերութեան սկզբնական կազմակերպություն կազմակերպելու
հարցը:

Այդ ժողովում Կարմիր Ուաշի շրջանային կոմիտեյի հրահան-
գիչը պետք է ղեկուցի, մի փոքր բովանդակալից ակնարկ տալով
հաղորդի, Կարմիր Ուաշի գործունեյութեան և նրա խնդիրների
մասին՝ սանիտարական պաշտպանութեան, սոցիալիստական շի-
նարարութեան ասարեկում և սովյալ ձեռնարկութեան մեջ: Ձե-
կուցման առթիվ ընդունվում է վորոշում սովյալ կոլեկտիվում
Կարմիր Ուաշի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպու-
թյուն կազմակերպելու մասին և նշանակվում կազմակերպիչ:

Կարմիր Ուաշի (Կարմիր Մահիկի) շրջանային կոմիտեյի հրա-
հանգիչը կամ ներկայացուցիչը ճշգրիտ ցուցումներ է տալիս և
մանրամասն հրահանգավորում է նոր նշանակված կազմակերպ-
չին, թե նա ինչ աշխատաք պիտի տանի և ինչումն է կայա-
նում Կարմիր Ուաշի (Կարմիր Մահիկի) մշտական կոմիտեյի ընտ-
րությունների նախապատրաստությունն իր ձեռնարկությու-
նում, խորհանտեսությունում, ՄՏԿայանում, կոլանտեսութեան
կամ հիմնարկութեան մեջ:

Այդ աշխատանքը հիմնականում կայանում է հետևյալում:

Հրատ. 3707. Գլալ. 2085. Պատվեր 583. Տիրաժ 3000.

Հանձնված և արտադրութեան 17 սպրիլի, 1936 թ.

Ստորագրված է սպաղրելու 25 սեպտեմբերի, 1936 թ.

Պետհրատի սպարան, Յերևան, Ու Գնուկի 4.

1) Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) անդամների հավաքադրում :

2) Կարմիր Խաչի անդամների ժողովի հրավիրումը և մշտական կոմիտեյի ու վերստուգիչ հանձնաժողովի ընտրություններ :

3) ՊԱՍՊ կրթական նորմաների հանձնման խմբակի կազմակերպում :

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերության անդամներ վարող են լինել բոլոր այն աշխատավորները, վորոնք 16 տարեկան և բարձր հասակ ունեն և զրկված չեն ընտրական իրավունքից :

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունը—մասսայական կազմակերպություն է, վորն ոգնում է խորհրդային կառավարությանը, ոգնում է Կարմիր բանակին, և այդպիսի ընկերության անդամ կարող է լինել միմիայն Խորհրդային Միության լիակատար իրավունք վայելող քաղաքացին :

Անդամների հավաքադրումը պետք է բացառապես անհատորեն կատարվի: Յուրաքանչյուր նոր ընդունվողի հետ պետք է ունենալ զրույց ընկերության նշանակության, յերկրի պաշտպանության և սոցիալիստական շինարարության գործում նրա կատարած աշխատանքի կարևորության մասին :

Հասկանալի չէ, վոր ընկերության անդամների հավաքադրման գուզընթաց բացատրական աշխատանք և ընկերական զրույցներ են տարվում, վորոնք ոգնում են բանվորական մասսային պարզ ըմբռնելու: Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) շարքերը յուրաքանչյուր բանվորին ու կոլտնտեսականին, յուրաքանչյուր բանվորուհուն ու կոլտնտեսուհուն լայնորեն ներգրավելու անհրաժեշտությունը :

Ընկերության անդամ ընդունվելը ձևակերպվում է հետևյալ կերպ .

Ընդունվողը լրացնում է հաշվաման քարտը, մուծում է մուտքի վճարը, վոր սահմանված է Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) ընկերության անդամ ընդունվող բոլոր անձնավորությունների համար — 50 կոպեկ և անդամավճարը :

Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) յուրաքանչյուր անդամ ամեն տարի պետք է մեկ տարվա անդամավճար մուծի. չհարկվող նվազագույն աշխատավարձ ստացող բանվորներն ու ծառա-

յողները, սովորողները և կարմիր բանակայինները — մուծում են տարեկան 1 ռուբլի. բանվորներն ու ծառայողները, վորոնք վաստակում են հարկվող միմիայն ալելի և մինչև ամսական 300 ռ., կոլտնտեսականները և աշխատավոր մենատնտեսները — տարեկան 2 ռուբլի: Մնացած բոլորը — տարեկան 3 ռուբլի: Անդամավճարը կարելի չէ մուծել ընդունվելու ժամանակ 6 ամսվա համար միանգամից :

Առաջին անգամ Կարմիր Խաչի անդամ ընդունվողները պետք է վճարեն նաև անդամագրքույկի արժեքը (10—35 կոպ.) : Անդամավճարը ճշտապահորեն մուծելը հանդիսանում է ընկերության յուրաքանչյուր անդամի տարրական պարտականությունը և միաժամանակ կազմակերպող սկզբունք է հանդիսանում, վոր ընկերության անդամներին սերտորեն կապում է սկզբնական կազմակերպությունների հետ: Կազմակերպիչը ցուցակների հիման վրա, վորոնց մեջ մատնանշված են աղանդները և յուրաքանչյուր մուծած դրամական դրամարները, լրացնում է անդամագրքույկները և ստացած անդամավճարի դրամարի համեմատ փակցնում է դրոշմանիշներ :

Կազմակերպիչը 3—5 օրվա ընթացքում պետք է վերադարձնի ընկերության անդամ ընդունվողներից յուրաքանչյուրի լրացրած անդամագրքույկները: Այդ գրքույկները հանձնելիս պետք է վերցնել ստորագրություն :

Այնուհետև հրավիրվում է ընկերության անդամների ընդհանուր ժողով, կոմիտեյի ընտրության համար: Ընդհանուր ժողովի հրավիրումն ու կոմիտեյի ընտրությունը, ինչպես և նրա հետագա վողջ աշխատանքը, ընտրողների առաջ հաշվետվություն տալը պետք է կառուցված լինի լայն դեմոկրատիայի հիման վրա :

Յեթե հավաքադրումից հետո Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) ընկերության անդամների թիվը 15-ից պակաս է, ընտրվում է մեկ կազմակերպիչ սովյալ ձեռնարկության կամ հիմնարկության համար :

Յեթե ձեռնարկության կամ հիմնարկության մեջ ընկերության անդամների թիվը 25-ից ալելի չէ, ապա ընտրվում է Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) կոմիտե՝ 3—7 անդամից բաղկացած և վերստուգիչ հանձնաժողով՝ 3—5 հոգուց բաղկացած, մեկ տարի ժամանակով: Առաջին կազմակերպչական ժողովի ո-

րակարգը պետք է կազմված լինի մասնավորապես հետևյալ յե-
րեք հարցերից. 1) ղեկուցում կազմակերպչի աշխատանքի մա-
սին, 2) ինչ աշխատանք պիտի տանի Կարմիր Սաշը՝ տվյալ
ձեռնարկության, կոլտնտեսության (հիմնարկության) մեջ, 3)
Կոմիտեյի և Վերստուգիչ Հանձնաժողովի ընտրությունները:

Կազմակերպիչը կպատմի, թե քանի անդամ է հավաքագրու-
վել, ինչպես է անցել հավաքագրումը, կմատնանչի առանձին
ակտիվիստների աշխատանքը, նրանց ցուցաբերած ձեռներեցու-
թյունը և կտա կատարված աշխատանքի հանրազումարը:

Ամենակարևոր հարցերը, վորոնք նախորդ կանխորոշում
են ապագա կոմիտեյի աշխատանքի հաջողությունը, դա կոմիտե-
յի և ցեխային կազմակերպիչների անհատական կազմն է:

Ցեխային կազմակերպիչը հանդիսանում է Կարմիր Սաշի
խնդիրների հիմնական անցկացնողն իր ցեխում: Ցեխային կազ-
մակերպիչը, վորն ընտրվում է տվյալ ցեխի Կարմիր Սաշի
(Կարմիր Մահիկի) անդամների ընդհանուր ժողովում, ցեխում
բացատրական աշխատանք է տանում Կարմիր Սաշի խնդիրների
մասին, ղեկավարում է սանպոստի աշխատանքը, կատարում է
կոմիտեյի առաջադրությունները և հաշվետու յե վերջինիս ա-
ռաջ:

Անդամավճարների կանոնավոր մուծումներն ապահովելու
նպատակով, յուրաքանչյուր ցեխում, բացի ցեխային կազմա-
կերպիչից, ընտրվում է անդամավճարների հավաքարար, վորք
հաստատվում է սկզբնական կազմակերպության կոմիտեյի կող-
մից:

Ցեխային կազմակերպիչը, կոմիտեյի ղեկավարությունում,
կազմում է իր աշխատանքի պլանը և այն կիրառում է իր ցե-
խում: Կոմիտեն պետք է պարբերաբար՝ ամիսը մեկ անդամ
հավաքելով ցեխային կազմակերպիչներին, լսի նրանց հեշվետը-
վությունները և նրանց տա ցուցումներ, թե ինչպես պետք է աշ-
խատել:

Ցուրաքանչյուր ցեխային կազմակերպիչ պետք է ճանաչի
կոմիտեյից իրան կցված անդամին, վորին նա կարող է դիմել
բացատրություն ստանալու ընթացիկ աշխատանքի բոլոր հար-
ցերի վերաբերյալ:

Ցեխային կազմակերպիչներին պետք է մանրամասն բացատ-

րել, թե ինչումն է կայանում նրանց պարտականությունները:

Ամենից առաջ կազմակերպիչներն ինքները պետք է մտնեն
ընկերություն անդամների շարքերը:

Հասարակական կազմակերպության աշխատանքում, վոր-
տեղ բոլորը կառուցված է նախաձեռնության և ինքնազործունե-
յունի վրա, կոմիտեյի անդամների ու ցեխային կազմակեր-
պիչների ընտրությունը նախապես կանխորոշում է Կարմիր Սա-
շի աշխատանքի վող ընթացքը ձեռնարկության մեջ: Ահա թե
ինչու թեկինածուների ընտրությունը պետք է հատուկ խնամքով
մոտեցում ցուցաբերել:

Կոմիտեյի անհաջող աշխատանքը և հետագայում նրա քայ-
քայումը, վորպես կանոն, կոմիտեյի անդամների և ցեխային
կազմակերպիչների անհաջող և անուշադիր ընտրության ար-
դյունքն է լինում: Ցերքեմն ժողովում կոմիտեյի անդամներ և
ցեխային կազմակերպիչներ են ընտրում պատահական, չստուգ-
ված կամ բացակայող ընկերներին, կամ ընտրում են հակառակ
ընտրվողի ցանկության այնպիսի ընկերներին, վորոնք հրաժար-
վում են այդ աշխատանքից: Այդպիսի վոչ լուրջ վերաբերմունքի
հետևանքով, ցեխային կազմակերպիչները և վոչ զործունյա կո-
միտեն անկենսունակ են լինում:


Կարմիր Սաշի (Կարմիր Մահիկի) աշխատանքի ղեկավարու-
թյունը իրազործելու համար կոմիտեյի կազմի համար անհրա-
ժեշտ է ընտրել դիտակից և քաղաքականապես զբաղեա անդամ-
ներ:

Կոմիտեյի կազմի համար առաջադրված թեկինածույունները
հանձնարարվում է ըննության առնել ձեռնարկության ղեկավար
կազմակերպությունների հետ: Կոմիտեյի կազմում պետք է
ընտրվեն ակտիվ հասարակական աշխատողները, քաղաքականա-
պես տոկոն և աշխատունակ ընկերները, վորոնք կարողանում
են կազմակերպել մասսան և հեղինակություն են վայելում տը-
վյալ ձեռնարկության, խորհրդատեսության, կոլտնտեսության և
ՄՏԿայանի աշխատողների մեջ:

Ձեռնարկության, կոլտնտեսության, բնակավարձկոպի և
այլն, Կարմիր Սաշի անդամների խմբակի սկզբնական կազմա-
կերպությունը պետք է գլխավորի Կարմիր Սաշի կոմիտեյի բա-
ցառապես զործունյա և համերաշխ կազմը, իսկ ցեխերում —
աշխատունակ կազմակերպիչները: Ուստի անհրաժեշտ է նախա-

պես ընտրել թեկնածուներ և քննութեան առնել նրանց թեկնածութիւնը. պետք է խնամքով ընտրել այնպիսի մարդկանց, վարոնք հետաքրքրվում և ցանկանում են դրադիւր հասարակական աշխատանքով, կոմիտեյի կազմում պետք է ընտրել այնպիսի անդամներ և ցեխային կազմակերպիչներ, վորոնք կարող են ներկցվել հասարակական աշխատանքի և սպահովել այն խնդիրներին իրադրծումը, վորոնք կանգնած են Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերութեան առաջ, պետք է լայնորեն ներդրաւիչ այդ աշխատանքին աշխատավոր կանանց, կոլտնտեսուհիներին, բանվորներին կանանց և կոմյերխուհիներին:

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպութեան կառուցման սխեման



Կարմիր Սաչի անդամներին ընդհանուր ժողովներն անցկացնելը մասսայական աշխատանքի ամենակարևոր ձևերից մեկն է. ընդհանուր ժողով հրավիրելը և նրա նախապատրաստումը դժվարին ու պատասխանատու դործ է:

Գնալով ամենավոր դիմադրութեան դժով, մի քանի կոմիտեներ շատ հարվադեպ, իսկ յերբեմն ել բոլորովին չեն դումարում ընդհանուր ժողովներ, իրենց աշխատանքի մասին հաշվետու զեկուցումներ չեն տալիս իրենց ընտրողներին և կտրվում են մասսայից:

Հաշվի առնելով ընդհանուր ժողովը կանոնավոր անցկացնելու կարևորութիւնը, կոմիտեն պետք է հմտորեն նախապատրաստի ընդհանուր ժողովի դումարումը: Ժողովի նախապատրաստութիւնը բաղկացած է հետևյալ աշխատանքներից.

ա) Ժամանակին հաղորդել Կարմիր Սաչի բոլոր անդամներին ժողովի դումարման մասին:

բ) Որակարգի և ընդհանուր ժողովում տրվելիք զեկուցումների նախապատրաստումը:

Ընդհանուր ժողովի դումարման հաջողութիւնը կախած է գլխավորապես նախապատրաստման այդ յերկու հիմնական մոմենտներից:

Կանոնավոր և ժամանակին հաղորդումը խնամքով աշխատանք է պահանջում: Յեթե հնարավորութիւն կա, պետք է ողտադործել անհատորեն հաղորդելու մեթոդը, վորպեսզի Կարմիր Սաչի յուրաքանչյուր անդամ այնպիսի ծանուցադիր ստանա, վորից նա իմանա, թե ինչպիսի հարցեր են քննարկվելու ժողովում, վորտեղ և յերբ է հրավիրվում ժողովը:

Ժողովը պետք է հրավիրել 3 ամիսը մեկ անգամ: Ժողովում պետք է դնել կարևոր հարցերը, վորոնք նշանակութիւն ունեն վորչ կոլեկտիվի համար:

Ընդհանուր ժողովում քննարկվելիք հարցերի թիւում կարելի յե որինակի համար մատնանչել հետևյալը.

- ա) Կարմիր Սաչի կոմիտեյի ընտրութիւնը.
- բ) Աշխատանքի պլանի քննարկումը.
- գ) Հաշվետվութիւն կոմիտեյի աշխատանքի և պլանի կատարման մասին.
- դ) Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ցեխային կազմակերպիչների հաշվետվութիւնները.
- ե) Հաշվետվութիւններ սանխտարական պոստերի աշխատանքների մասին.
- զ) Կարմիր Սաչի անդամներին՝ առանձին ակտիվիստների հաշվետվութիւնները.

ը) ՊԱՍՊ կրճաքանչանակիրները պատրաստման ու նրանց ա-
վարտման արդյունքները:

թ) Վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը:

Որակարգը չպետք է ծանրաբեռնել բազմաթիվ հարցերով.
բավական է սահմանափակվել մեկ-յերկու հարցով: Ժողովը չը-
պետք է ձգձգել, այլ պետք է ձգտել հարցերի գործնական ջըն-
նարկմանը քննադատության ու ինքնաքննադատության ծավալ-
մանը, վերջը դրսևորում է կոմիտեյի աշխատանքի բացերն ու
ոգնում է դրանց վերացմանը:

Որակարգը պետք է կազմված լինի այնպիսի հարցերից, վո-
րոնք կապված լինեն ընդհանուր ժողովի վորոշումների և աշխա-
տանքի պլանի կատարման հետ:

Կարմիր Ուսչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպու-
թյան կոմիտեն հավաքվում է կանոնավոր կերպով ամիսը 2 ան-
գամ և յերկու ամիսը մեկ անգամ հրավիրում է կոմիտեյի լայ-
նացրած նիստ՝ ցեխային կազմակերպիչների, հասարակական ակ-
տիվ աշխատողների և առանձին կազմակերպությունների ղեկա-
վարների մասնակցությամբ [ուղիմա-սանիտարական գիտելիքնե-
րի (ՌՄԳ) խմբակների ղեկավարների, «Պատրաստ սանիտարա-
կան պաշտպանություն (ՊԱՍՊ), բժիշկների, քույրերի կուրսերի
ղեկավարների և այլն]:

Կոմիտեյի անդամները ժողովներում պետք է քննարկվեն մո-
տավորապես հետևյալ հարցերը.

ա) Պարտականությունների լրատումը կոմիտեյի անդամնե-
րի միջև.

բ) Կոմիտեյի աշխատանքի պլանի կատարման ընթացքը.

գ) Վերադաս կոմիտեյից ստացված առաջադրությունների և
կոնտրոլ թվերի քննարկումը.

դ) ՊԱՍՊ խմբակի ղեկավարի հաշվետվությունը.

ե) Սանիտարական պոստերի աշխատանքի մասին.

զ) Ակտիվի հետ տարվող աշխատանքի մասին, առանձին ակ-
տիվիստներին տրվելիք առաջադրությունները.

ը) Մասսայական կամպանիաները նախապատրաստելու և
անցկացնելու մասին:

Կոմիտեյի խնդրն է՝ կազմել աշխատանքի պլանը, կազմա-
կերպել ակտիվը և ղեկավարել նրա աշխատանքը, ինչպես նաև
ապահովել պլանի կոնտրոլ թվերի կատարումը:

Կոմիտեյի յուրաքանչյուր անդամ պետք է ունենա վորոշա-
կի և ձեռք սահմանված պարտականություններ: Կոմիտեյի առ-
գամների կազմից ընտրվում է նախագահ — հասարակական
կազմակերպության ղեկավարման գործում ամենապատրաստված
և փորձված անձնավորություն, վերջը հեղինակություն և վա-
յելում ձեռնարկության, հիմնարկության մեջ:

Կոմիտեյի նախագահը նախապատրաստում է այն բոլոր
հարցերը, վորոնք յենթակա յեն կոմիտեյում քննարկելուն, հրա-
վիրում է նիստերը, կապ է հաստատում ձեռնարկությունների
կուսակցական և պրոֆիտեթենական ղեկավար կազմակերպու-
թյունների հետ, կապ է պահպանում վերադաս կոմիտեյի հետ,
բաշխում է ընթացիկ աշխատանքի վերաբերյալ առաջադրու-
թյունները և անհատապես պատասխանատու յե կոմիտեյի աշ-
խատանքի և ընդհանուր գործարանային (ֆաբրիկային) մասըչ-
տաբով կազմակերպությունների համար (կուրսեր, դրուսիաններ,
ախտահանող բյուրո, վարսավիրանոցներ և այլն):


Կոմիտեյի անդամներից մեկի վրա պարտականություն է
դրվում՝ ստանալ կոմիտեյի դրամական գումարները և վաշել
բոլոր ֆինանսական գործերը:

Կոմիտեյի բոլոր անդամներն ամրացվում են և պատասխա-
նատվություն են կրում մեկ ցեխի կամ ցեխերի խմբակի աշխա-
տանքի համար (կադրերի պատրաստում, ՊԱՍՊ խմբակների
կազմակերպում, առողջացման միջոցառումներ անցկացնելը, սա-
նիտարական պոստերի դասավորումն ու նրանց աշխատանքի ղե-
կավարումը, միասնական սանիտարական որեր անցկացնելը, շա-
բաթորյակների կազմակերպումը, սանիտարական շրջադասյու-
թյունները, սանիտարական թեմաների շուրջը դասախոսություն-
ներ և զրույցներ անցկացնելը և այլն):

Կոմիտեյի յուրաքանչյուր անդամ աշխատանքի յր հատվածի
վերաբերյալ ունի յր պլանը, վորի կատարման համար յինքն ել
պատասխանատու յե կոմիտեյի առաջ, յուսի այդ պլանի կատար-
ման համար պետք է ներդրավի ակտիվը և աշխատի նրա ող-
նությունը:

Չպիտի ստեղծվի այնպիսի դրություն, յերբ կոմիտեյում
վողջ աշխատանքը կատարում է միայն նախագահը, յակ կոմի-
տեյ միացած անդամները մատնված են անգործության: Կոմի-
տեյի աջալիսի վոչ գործունյա անդամներին պետք է գործնա-

Կամրտեյի ամբամների միջև պարտականությունների բաշխում



կան աշխատանքի ներգրավել, իսկ յեթե հնարավոր չե նրանց համոզել և աշխատանքի ներգրավել, պետք է հանել կոմիտեյի կազմից, յենթարկել հասարակական պարտականքի և վոխարի-նելով նրանց ավելի աշխատունակ անդամներով:

Այդպիսի դրուեթյունը կանխելու համար, պետք է պարբերաբար լսել կոմիտեյի առանձին անդամները հաշվետվությունները, ստուգել նրանց տրված առաջադրությունների կատարումը և սգնել նրանց աշխատանքի ընթացքում:

Վորոշ ղեկավարում կոմիտեյները կազմվում են ուղղակի մեխանիկորեն — զանազան կազմակերպություններից «ներկայացուցիչներ» տալու միջոցով: Կոմիտեյի այդպիսի կազմը, վորը կազմըված է ներկայացուցչական սկզբունքով, շատ հաճախ անաշխատունակ է լինում և հաճախ կազմալուծվում է:

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպության կոմիտեյի վերստուգելի հանձնաժողովը վերստուգում է սկզբնական կազմակերպության կոմիտեյի վորջ գործունեյությունը, աղ թվում նաև վերստուգում է սկզբնական կազմա-

կերպության Ֆինանսական-անտեսական աշխատանքը: Վերստուգելի հանձնաժողովը ստուգում է կոնտրոլ թվերի, պլանների, սոցպայմանագրերի կատարումը, դրամական միջոցների ծախման նպատակահարմարությունը, հաշվառման ու հաշվետվության, ինչպես նաև դրամի պահպանման կանոնադրությունը, ստուգում է հաշվային փաստաթղթերը, համեմատելով այդ փաստաթղթերը մատյաններում յեղած գրանցումների հետ, նրամանապես ստուգում է անդամավճարների դրոշմանիշների և նյութական արժեքների հաշվառումը:

Վերստուգելի հանձնաժողովն իր կատարած ստուգման հիման վրա կազմում է արձանագրություն, իր կատարած աշխատանքի մասին, յեղրակացություն և տալիս պլանի, բյուջեի կատարման, հաշվառման ու հաշվետվության վիճակի մասին և իր աշխատանքի արդյունքների մասին ղեկուցում է սկզբնական կազմակերպության անդամների ընդհանուր ժողովին:

Սկզբնական կազմակերպության վերստուգելի հանձնաժողովի խնդիրները մեջ է մտնում նաև բյուջեի յեկամուտի աղբյուրների կատարման սխտեմատիկ հսկողությունը, առաջին հերթին անդամավճարների, նպատակային մուտքերի կոնտրոլը, վորովհետև հետև բյուջեի մուտքի մասի կատարման աստիճանից էլ կախված կլինի Կարմիր Սաչի և Կարմիր Մահիկի սկզբնական կազմակերպության կոմիտեյի աշխատանքների պլանի կատարումը:

Սկզբնական կազմակերպության վերստուգելի հանձնաժողովի մյուս կարևոր խնդիրն է՝ ստուգել, թե սկզբնական կազմակերպության կոմիտեյն ինչպես է կատարել իր պարտավորությունները հանդեպ Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) շրջանային կոմիտեյի (կոնտրոլ թվերի և առաջադրությունների կատարումը, անդամավճարներից հատուկ նպատակով հավաքած գումարներից կատարվելիք հատկացումների վոխանցումը և այլն):

Մեր կազմակերպության աշխատանքը կարող է ճիշտ կառուցված և կենսագործված լինի յուրաքանչյուր ձեռնարկության, կոլտնտեսության, հիմնարկության մեջ և այլն միայն այն դեպքում, յեթե կազմակերպությունն ամենուրյա քաղաքական ղեկավարություն է ստանում տեղական ղեկավար կազմակերպություններից և յեթե նրա պլաններն ու հիմնական միջո-

ցառումները համակված են այն ընդհանուր շահերով ու խնդիրներով, վերոնց համար աշխատում են տվյալ կոլեկտիվի կուսակցական, պրոֆմիուլթենական և հասարակական կազմակերպությունները:

Կարմիր Սաչի կոմիտեյի մասսայական աշխատանքի հաջող ծավալումը չի կարող լրակատար իրականացվել՝ առանց պաշտած կերպով կապակցելու իր աշխատանքը տեղական պրոֆմիուլթենական կազմակերպության հետ:

Ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, խորհրդատեսություններում գոյություն ունեն նաև ուրիշ կամավոր ընկերություններ, որինակ՝ Պաշտիաքիմ, ՄՈՊՐ և այլն: Այդ բոլոր ընկերությունների միջև պետք է ստեղծվի վերոշակի կոնտակտություն, պետք է փոխադարձ համերաշխ աշխատանք և փոխադարձ ոգնություն լինի մեծ կամպանիաներ կամ կարևոր միջոցառումներ անցկացնելու ժամանակ:

Կոմիտեների աշխատանքի պրակտիկան ցույց է տալիս, թե փորձան կարևոր է գործարար կոնտակտություն հաստատելը Պաշտիաքիմի կազմակերպությունների հետ, վերոնց խնդիրները շատ բաներում համապատասխանում ու համընկնում է մեր սանիտարական պաշտպանության աշխատանքի հետ:

Սանիտարական դրուժինաների և Պաշտիաքիմի ստորաբաժանումներին միատեղ պարապմունքները, միասին դաշտ դուրս գալը, այնպիսի կամպանիաներ անցկացնելը, ինչպիսիք են Կարմիր բանակի որվա, Միջադաշին հակապատերազմական որվա, Այլիսցիայի որվա տոնակատարությունները, պետք է անցկացնել Կարմիր Սաչի և Պաշտիաքիմի ընդհանուր ուժերով և միասնական պլանով, ներդրավելով իրենց կազմակերպությունների ակտիվը: Ճիշտ այդպես էլ բարեկամաբար և լրակատար կոնտակտությամբ պետք է անցկացնել նաև կադրերի պատրաստման ընթացիկ ամենօրյա աշխատանքը: Այսպես, որինակ, Կարմիր Սաչի և Կարմիր Մահիկի կազմակերպությունները սովորեցնում են Պաշտիաքիմի անդամներին, թե ինչպես պետք է ցույց տալ առաջին ոգնություն, նրանց պատրաստում են ՊԱՍՊ կրծքանշանի նորմաները հանձնելու համար, իսկ Պաշտիաքիմի հրամատարներն անց են կացնում Ֆրոյդիական պատրաստության և շարային պարապմունքները Կարմիր Սաչի սանիտարական դրուժինաների հետ:

Մասսայական առողջացման բնույթ կրող բոլոր միջոցառումները, վողջ այն աշխատանքը, վոր անց են կացնում Կարմիր Սաչի կոմիտեները՝ աշխատանքի և կենցաղի պայմանները բարելավելու համար, պետք է ամենաշեղմ ոժանդակություն և իրական ոգնություն ստանան պրոֆմիուլթենական կազմակերպությունների կողմից: Բանվորների սանիտարական-կենցաղային պայմանների բարելավման աշխատանքն անցկացնելը հեշտացնում է պրոֆմիուլթյունների առաջ կանգնած խնդիրների իրագործումը:

Ահա թե ինչու այդ բնագավառում կատարված աշխատանքի մասին գեկուցումներ պետք է լավ են պրոֆմիուլթյունների գործարանային ու Փարբիկային կոմիտեների նիստերում: Բացի այդ, պրոֆմիուլթենական կազմակերպությունների կողմից պետք է ոգնություն ստացվի, վորը կապահովի մասսայական սանիտարական արշավների կատարումը և սանիտարական-կենցաղային հիմնարկների (վարսավիրանոցներ, լվացքատներ, դուշային հաստարանների և այլն) ստեղծումը և գոյություն ունեցողների ավելի լավ կազմակերպումը:

Այդ ոժանդակությունը կարող է արտահայտվել համապատասխան շենք, վորոշ կահավորում հատկացնելով, վերանորոգում կատարելով և այլն, հրավիրել ընդհանուր ժողով Կարմիր Սաչի կոմիտեյի առաջադրությունները բանվորներին սպասարկելու և նրանց սանիտարական-կենցաղային պլանը քննարկելու համար, կամ այդ հարցերը քննարկելով հերթական ընդհանուր ժողովում կամ գործարանային կոմիտեյի ժողովում:

Առանց այդպիսի ոժանդակության, կարող է թղթի վրա մընալ սանիտարական-կենցաղային աշխատանքը, վոր նախատեսված է Կարմիր Սաչի կոմիտեյի պլանով:

Սկզբնական կազմակերպության կոմիտեյի, նրա կադրերի պատրաստման սխեմայի, առողջացման միջոցառումների անցկացման, անդամների հավաքագրման կարգի, մասսայական աշխատանքի բովանդակության անմիջական գեկալարությունը կենսագործում են Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) շրջանային կոմիտեները:

Սկզբնական կազմակերպության յուրաքանչյուր կոմիտե՝ Ֆարբիկայում, գործարանում, խորհրդատեսություն, կոլտնտեսություն, հիմնարկության մեջ իր այդ աշխատանքի բոլոր տե-

սակների վերաբերմամբ, յենթարկվում է Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) շրջանային կոմիտեյին:

Իրենց շրջանային կոմիտեյից սկզբնական կազմակերպությունների կոմիտեներն ստանում են ցուցումներ, կոնտրոլ թրվեր, նպատակադրումներ՝ թե ինչպես և ինչ պիտի կատարել կոմիտեն սովյալ ժամանակում իր ձեռնարկության մեջ:

Սկզբնական կազմակերպությունները ներկայացնում են շրջանային կոմիտեյին իրենց աշխատանքի մասին հաշվետվություն, զեկուցումներ են տալիս առանձին հարցերի վերաբերյալ և հատկապես իրենց կարևոր վորոշումները ներկայացնում են ի հաստատություն:

Շրջանային կոմիտեներն իրենց հրահանգիչների միջոցով կենսապարծում են Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպությունների կոմիտեների կենդանի ղեկավարությունը:

Հրահանգիչները մեկնում են տեղերը, ստուգում են կոմիտեների աշխատանքը և ստացած նյութերի հիման վրա հրահանգափոքրում, ոգնում են և ցուցումներ են տալիս հետագա աշխատանքների համար և ինչպես պետք է վերացնել դոյություն ունեցող թերությունները:

Շրջանային կոմիտեներն իրենց տեղական կոմիտեների ղեկավարելու պրոցեսում խորհրդակցության են կանչում ըսկզբնական կազմակերպությունների նախագահներին, սկզբնական կազմակերպությունների կոմիտեների աշխատողների կոնֆերանսներ են կազմակերպում, ստուգում են կոնտրոլ առաջադրությունների, պլանների, սոցմրցակցության պայմանադրերի կատարումը:

Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) շրջանային կոմիտեները կազմակերպում են փորձի փոխանակումներ, հայտարարում են սկզբնական կազմակերպությունների կոմիտեների աշխատանքի լավադույն որինակները, հանձնարարում են այդ մեթոդները մյուս կոմիտեներին, հայտարարում են լավադույն ակտիվիստներին, հավաքում են նրանց Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) աշխատողների կուրսերում, պարզեատրում են լավադույն աշխատողներին՝ իրենց ձեռնարկության, հիմնարկության, խորհրտեսուլության, կոլտեսուլության սանիտարական պաշտպանության գործում կատարած հարվածային աշխատանքի համար:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԸ

Մեր պետության մեջ վողջ ժողովրդական տնտեսությունը պլանով է կառուցվում: Պլանով աշխատում են Ֆարբիկաները, գործարանները, արանսպորտը: Պլանով պետք է աշխատեն նաև հասարակական կազմակերպությունները:

Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպության յուրաքանչյուր կոմիտե, պլան ունենալով, պատկերացնում է, թե ինչի համար է նա պայքարում, պատկերացնում է, թե ինչ է լինելու նրա աշխատանքի անմիջական արդյունքները:

Պլանը պետք է այնպես կազմված լինի, վոր այն ամենը, ինչ նախատեսված է պլանով, համապատասխանի այդ խնդիրներին, վորոնք կանգնած են սովյալ ձեռնարկության Կարմիր Խաչի կազմակերպությունների առաջ:

Պլանն այն աշխատանքի կոնկրետ արտահայտությունն է, վոր սպասում է անդամների մասսան իր կոմիտեյից:

Պլանն այն առաջադրություններն է, վորն ստացել է կոմիտեն վերադաս կազմակերպությունից:

Պլանը միայն այն ժամանակ արժեք կներկայացնի և նշանակություն կունենա, յեթե նա կհամապատասխանի իր ձեռնարկության շահերին, կարտացույլ այդ ձեռնարկության բանվորներն ու ծառայողներն կուկեկտիվի շահերը, ուղղված կլինի իր գործարանի, Ֆարբիկայի, կոլտեսուլության մաքրության ու առողջացման համար պայքար մղելուն:

Կարմիր Խաչի կոմիտեյի աշխատանքի պլանը պետք է ունալ լինի և նպատակ ունենա գործնական աշխատանքի ներգրավելու կոմիտեյի կողմից միացվող Կարմիր Խաչի անդամների հիմնական մասսան:

Պլան կազմելիս, կոմիտեն պետք է հիշի մեր մեծ առաջնորդ ընկ. Ստալինի խոսքերը. — «Մեր արտադրական պլանի ռեալությունը — դա մեր յերկրի միլիոնավոր աշխատավորությունն է, վորը նոր կյանք է ստեղծում»:

Պլանը կազմվում է ձիշտ վորոշված ժամանակաշրջանի համար: Կոմիտեյի աշխատանքի սկզբում, յերբ դեռ չի հայտնաբերված ակտիվը և հաշվի չեն առնված ուժերը, պետք է պլանը մշակել մեկ ամսվա համար, վորպեսզի հետագայում, յերբ կպարզվեն աշխատանքի ղլխավոր բնագավառներն ու կոմիտեյի

101
2046

407

հնարավորութիւնները, հնարավոր լինի անցնել յեռամսյակային պլան (յերեք ամսվա համար) կազմելուն:

Պլանի յուրաքանչյուր կետ պետք է ունենա կատարման սահմանված ժամկետը, մատնանշելով այն աշխատողին, վորը պատասխանատու յե դարձվում այդ կետի կատարման համար: Որինակ.

ՈՐԱՅՈՒՅՄՅԻՆ ՊԼԱՆ

Ստալինի անվան գործարանի Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպության, 1-ին յեռնամսյակի համար:

№ ըստ կարգի	Պլանով նախատեսված միջոցառումները	Կատարման ժամկետը	Պատասխանատու կատարող
1	Պատգ ծրագրով սովորեցնել 30 մարդ	15 մարդ	Բժիշկ Իվանովը
2	Ձուլաքանի ցեխում կազմակերպել սանիտարական սրտս	20 մարդ	Յեխի կազմակերպիչ ընկ. Տեգոտովը

Պլանի յուրաքանչյուր կետը պետք է ձևակերպված լինի պարզորոշ և կոնկրետ կերպով: Որինակ, ինչ արժեք կարող են ունենալ այնպիսի կետերը, վորոնք զբված են այսպիսի անորոշ խմբազրությամբ:

Որինակ՝ «Բոլոր ցեխերում ու բրիգադներում մասսայական աշխատանք ծավալել ՌԿՍ ընկերության վերաբերյալ»: Կամ՝ «Բարձրացնել Կարմիր Խաչի անդամների մասսայի ակտիվութիւնը Փարբիկայում»: Ինչպես ստուգել, կատարված են արդյոք, թե՞ չեն կատարված այդ կետերը: Մասսայական աշխատանքի մասին կետ մշակելիս, պետք է ճիշտ թվարկել, թե վորտեղ, յերբ և մանավանդ ինչ պրոպեցներ, ընթացանութիւններ, յերկուլթներ, խմբական պարամպուններ և այլն պիտի տեղի ունենան:

Այսպիսով, պլանում առաջադրվող կարևոր պահանջներից մեկն է՝ ձևակերպման ճշտութիւնն ու կոնկրետութիւնը: Յուրաքանչյուր կոմիտե պետք է իմանա, թե ինչի համար է նա պարզաբոլում տվյալ ժամանակամիջոցում, և պետք է ունենա իր կոնտրոլ թվերը, որինակ.

Ստալինի անվան գործարանի Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպության կոմիտեի կոնկրետ պլանը յեռամսյակի համար:

1. Յեխերում ստեղծել 15 ակտիվ աշխատող սանիտարական սրտեր:
2. Պատրաստել ՊՍՍՊ-ի 150 կրծքանշանակիրներ:
3. Գործարանի 600 բանվորներին ընդգրկել անդամության և լիովին հավաքել անդամավճարները:
4. Գործարանում բաց անել Կարմիր Խաչի դուշային պավիլիոն (տաղավար):
5. Կազմակերպել Կարմիր Խաչի անվան 10 բրիգադ:

Այսպիսով, յուրաքանչյուր պլան պետք է իր մեջ պարունակի ամենից առաջ սանիտարական պաշտպանության վերաբերյալ առաջադրութիւններ և կոնտրոլ թվեր, վորոնք ստացվում են վերադաս կոմիտեյից, և միջոցառումներ, վորոնք անհրաժեշտ են տվյալ ձևակերպությանը, կոլտնտեսությանը, նպաստում են տեղերում աշխատանքի պայմանների, ինչպես և բանվորների ու կոլտնտեսականների կենցաղի առողջացմանը և վորոնք Կարմիր Խաչի կոմիտեյի անդամների կամ առանձին ակտիվիստների հանդես բերած նախաձեռնության արդոււնքն են յեղել:

Պլանի մեջ մտցրած միջոցառումները պետք է սպահովեն կոնտրոլ թվերի կատարումը:

Այս ձևով կազմված պլանը պետք է քննարկության դրվի կոմիտեյի նիստում և հետո փոխադրվի Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) անդամների ընդհանուր ժողովին ի հաստատութիւն:

Պլանը, ընդհանուր ժողովում հաստատվելուց հետո, կատարման պարտադիր փաստաթուղթ է դառնում, վորն ուղղութիւն է տալիս կոմիտեյի հետագա աշխատանքին վորոշ ժամանակաշրջանի ընթացքում (ամիս, յեռամսյակ, կիսամյակ, տարի):

Ընդհանուր ժողովի կողմից ընդունված պլանն անհրաժեշտ է սխտեմատիկաբար որեցոր կյանքում կիրառել: Պետք է ձգտել, վոր այդ պլանը կատարեն կոմիտեյի բոլոր անդամները և ցեխային կազմակերպութիւնները, իսկ նրանց ղեկավարությամբ և նրանց հետ միասին պլանի կատարման գործում յեռանդուն մասնակցութիւն ունենան նաև Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) բոլոր ակտիվիստները:

Նրանցից յուրաքանչյուրը պետք է ստանա կոմիտեյից պլանի վորոշ բնագալառ, առաջադրութիւն, վորը նա հանձն է


առնում կատարել հասարակական աշխատանքի կարգով սահմանված ժամանակամիջոցում :

Կոմիտեյի անդամներին պետք է դաստիարակել պատասխանատվութեան գիտակցութեամբ՝ իրենց ընտրողներին առաջ՝ պլանի իրացման, կոլտնտեսութեան, գործարանի, բանվորական ավանի սանիտարական պաշտպանութեան ամրապնդման համար :

Հատուկ նշանակութիւն ունի ցեխային կազմակերպչի պըլանը : Վորպես որինակ կարող է ծառայել դրան Մոսկվայի Տըրյոխգորնայա մանուֆակտուրայի գործարանի ցեխային կազմակերպիչներին աշխատանքը : Պլանային կանոնադր աշխատանքի հետևանքով, այդ գործարանի Կարմիր Սաչի կոմիտեն խոշոր նվաճումներ ունի : Տվյալ գործարանում աշխատում են 6.500 բանվոր, վորոնցից 75 տոկոսը կանայք են, ընդամենը կան 7 հիմնական ցեխեր . մանվածքի — 700 բանվոր, ջուլհակային — 1.500, սպիտակացման — 700, դաջա-ներկարարական — 800, մշակման ու ծալելու — 1000, մեքենաչինարարական — 900, տնտեսական — 500 . յուրաքանչյուր ցեխում կան Կարմիր Սաչի ցեխային կազմակերպիչ և անդամավճարների հավաքարար : Ցեխային կազմակերպիչներին և հավաքարարներին լավ աշխատանքի շնորհիվ, 1935 թվի մարտ ամսին արդեն լիովին հավաքված են յեղել 1934 թվի անդամավճարները և վերջացվում եր 35 թ. 1-ին յեռամսյակի անդամավճարների հավաքումը : Մանվածքի ցեխը մրցակցում է ջուլհակային ցեխի հետ : Բոլոր ցեխային կազմակերպիչներն ել ունեն Կարմիր Սաչի իրենց ակտիվ . մանվածքի ցեխի ցեխային կազմակերպիչ ընկ . Իվանովը 14 մարդուց բաղկացած ակտիվ է ստեղծել, իսկ ջուլհակային ցեխի ցեխային կազմակերպիչ ընկ . Մայորովն ստեղծել է 10 հոգուց բաղկացած ակտիվ և այլն : Յուրաքանչյուր ցեխային կազմակերպիչ ակտիվի ճիշտ հաշվառում է կատարում : Ցեխերում զոյություն ունեն լավ ձևակերպված աշխատունակ սանպոստեր և պտավող ցուցաբերիչների վրա Կարմիր Սաչի ցուցահանդեսներ : Մանվածքի ցեխում դեղերամի վրա ցույց է տրված Կարմիր Սաչի կազմակերպութեան աճն ըստ բրիգադների :

Ցեխային կազմակերպիչները պլանի համաձայն անց են կացնում Կարմիր Սաչի հինգրոպյակներ : Մանվածքի ցեխում անց են կացվել 24 հինգրոպյակներ :

Կուսկոմիտեյի քարտուղարի տեղակալ ընկ . Մեյերն ասում



ե. «ՌԿՍԸ մեր կազմակերպիչները լավ են աշխատում, միայն միշտ չեն կարողանում պատմել իրենց աշխատանքի մասին : Ամենամեծ արժանիքը յես համարում եմ այն, վոր ՌԿՍԸ կազմակերպությունը միշտ չի դալիս պահանջ դնելու, ինչպես այդ հաճախ է լինում, վոր մենք կուսակցութեան անդամներ առաջադրենք ՌԿՍԸ աշխատանքի համար, այլ իրենք են դաստիարակում յերիտասարդ բանվորուհիներին, վորոնք աճում են այդ աշխատանքի ընթացքում» :

Կարմիր Սաչի սկզբնական կազմակերպութեան կոմիտեյի նախադահ ընկ . Կուզմիան սերտորեն կապված է գործարանի բոլոր կազմակերպությունների հետ, նրան ճանաչում են բոլոր բանվորուհիները, նրա նախաձեռնութեամբ վերասարքավորված է բաղնիքը, լացված է վարսավիրանոց, իր ամենօրյա աշխատանքի ընթացքում նա Կարմիր Սաչի ակտիվ է դաստիարակում, դեկավարում է ցեխային կազմակերպիչներին, յուրաքանչյուր ցեխային կազմակերպիչին տալիս է աշխատանքի պլան :

Ահա ցեխային կազմակերպիչներից մեկի աշխատանքի պլանի մի մասը .

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱՅՈՒՅԱՅԻՆ ՊԼԱՆ

ՌԿԽԸ ցեխկազմակերպչի 1935 թ. հունվար, փետրվար, մարտ ամիսների համար
Տրյոխգորնայա մանուֆակտուրայի մանվածքի ցեխի

№ Ըստ կարգի	Ինչ անել	Կատարման ժամկետը	Ով և պատասխանատու	Կատարման արդյունքները
1.	Յուրաքանչյուր հերթավորումից հետո առանձին բրիգադում հնգրուակներ անցկացնել՝ սանիտարական-պաշտպանության աշխատանքի հարցերի և ՌԿԽԸ խնդիրները վերաբերյալ	մինչև 1/II	Իվանովա Որլովա	
2.	Կազմակերպել ՌԿԽԸ հարվածային բրիգադ	25/I	Կուզմինա Իվանովա	
3.	Մոլոտովի անվան բրիգադում ընտրել Կարմիր խաչի մեկ կողմակերպիչ	մինչև 10/I	Իվանովա	
4.	Յեխի բոլոր կոմյերեուականներին ընդգրկել ՊԱՍՊ-ի նորմաների հանձնման համար	25/II	Իվանովա Վասիլևա Որլովա	
5.	Ձևակերպել ցեխում կատարած սան-պաշտպանության աշխատանքի անկյուն (այսինքն արտացոլել Կարմիր խաչի ակտիվ աշխատանքը լուսանկարներով)	20/I	Իվանովա Որլովա	
6.	Աշխատել լիովին ընդգրկելու Մուլտոովի և 1905 թ. անվան բրիգադները	1/II	Իվանովա Որլովա	
7.	Սանպոստի ղեկավարից լրացնել ղեկորայրով	15/I	սանպոստի պետը	
8.	Պատի թերթում գրել հոդված Կարմիր խաչի աշխատանքների մասին (սանպաշտպանության բրիգադներին, անդամության աշխատանքն ու թերությունները՝ մաքրության համար պայքարի դրժուժ, ՊԱՍՊ կրճառնաակերները մասին և այլն)	յուրաքանչյուր 10-րդակ	Իվանովա և ակտիվը	
9.	Անցկացնել բժշկական գրույցներ առողջացման թեմաների շուրջը	ամիսը 1 անգամ	Աթանասյան	
10.	Կազմակերպել կինֆիլմի ցուցադրում սանիտարական պաշտպանության մասին	15/X	Կուզմինա	
11.	Ակտիվի հետ անցկացնել սեմինարիա Կարմիր խաչի աշխատանքների մասին	10/III	Աթանասյան (բժ.)	
12.	Լիկվիդացիայի յենթարկել 1-ին յուրամսյակի անդամավճարների պարաք	31/III	Որլովա	
13.	Յենթաչեֆ հանրակացարանում կազմակերպել սանպոստ այնպեղ ապրող ՊԱՍՊ կրճառնաակերներից	25/II	Իվանովա	

Պլանի կատարման, առանձին առաջադրությունների — պլանի բաղադրիչ մասերի կատարման վերահսկողություն և հարկավոր:

Այդ ստուգումը կատարում է անձնապես կոմիտեյի նախագահն ամենուրյա ղեկավարության կարգով:

Պլանը, ի հարկե, պետք է ստուգվի նաև Կարմիր խաչի վերադաս կազմակերպությունում, Կարմիր խաչի շրջանային կոմիտեյի հրահանգչի կողմից:

Սկզբնական կազմակերպության կոմիտեյի նիստերում պետք է լսել առանձին ընկերների ղեկուցումները, վորոնք պատասխանատու չեն իրենց հանձնարարված պլանի առաջադրությունների և կետերի կատարման համար:

Ահհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր ակտիվիստ իմանա, վոր ինքը պետք է հաշիվ տա իր տրված առաջադրության կատարման համար և վոր դրա համար սահմանված է վորոշակի ժամկետ:

Առանձին առաջադրությունների կատարումն ստուգելիս, կոմիտեն պետք է ողնի ընկերներին, վոր միայն իր ցուցումներով, այլ և գործնական աշխատանքով հատկապես դժվարին ղեպքերում: Պետք է աշխատանքն այնպես կազմակերպել, վորպետքի կոմիտեյի բոլոր անդամները և բոլոր ակտիվիստները կատարեն իրենց հանձնարարված առաջադրությունները սահմանված ժամկետին:

Ակտիվի կողմից կատարված բոլոր առաջադրությունները վերջիվերջո կազմում են կոմիտեյի վորջ պլանի կատարումը: Յեռամսյակային պլանը կատարելուց հետո նախագահը պետք է հանրազուժարի բերի ընդհանուր ուժերով կատարված աշխատանքը և հաշիվադրություն կազմի Կարմիր խաչի կազմակերպության ամբողջ պլանի. կատարման մասին:

Այդ հաշիվադրությունը պետք է ներկայացվի Կարմիր խաչի անդամներին ընդհանուր ժողովի քննարկմանը: Հաշիվադրության մեջ պետք է մատնանչել, թե ինչպես է ընթացել աշխատանքն անցած ժամանակամիջոցում, ինչպիսի դժվարությունների չե հանդիպել աշխատանքը, վոր ակտիվիստները հատկապես լավ են կենսադործել իրենց հանձնարարված առաջադրությունները, նրախնդից ով է ղեքակատարել իր պլանը, նույնպես և պետք է

մատնանշել, թե պլանի վոր կետերն են անկատար մնացել, ինչ պատճառներով և ում մեղավորութեամբ:

Անդամների մասան պետք է պարզ և ճիշտ պատկերացնի կոմիտեյի պլանային աշխատանքի մասին:

Այդպիսի հաշիվետվութեաններէ և նրանց քննարկման միջոցով, քննադատութեան և ինքնաքննադատութեան հիման վրա, կոմիտեն միշտ և սերտորեն կապված կլինի անդամներէ հետ և պատշաճ ոժանդակութեան կատանա իր աշխատանքի ընթացքում:

Կոմիտեյի կենդանի սերտ կապը մասսայի հետ գլխավոր պայմանն է հանդիսանում պլանի հաջող կատարման քաղաքում ու կոլտնտեսութեաններում, Փարբիկաներում ու գործարաններում սանիտարական պաշտպանութեան գործի ամրապնդման համար:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՍԱԿԵՐՊԵԼ ԱԿՏԻՎԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՆՐԱ ՇԵՏ ԱՇԽԱՏԵԼ

Հիմնական լողունը, վոր ուղղութեան է տալիս անդամներէ հետ տարվող աշխատանքին, այդ Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) 1-ին համամիութենական համագումարի վորոշումն է՝ «Չկա ընկերաբայան անդամ առանց պարտականութեաններին»:

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերութեան յուրաքանչյուր անդամ վոչ միայն անդամավճարներ է մուծում, այլ և բարեխղճորեն կատարում է իրեն հանձնարարված աշխատանքը: Կոմիտեյի ամենակարևոր խնդիրներից մեկն էլ աշխատավոր կանանց՝ Կարմիր Սաչի գործնական աշխատանքի ներգրավելն է:

Խոշոր է կնոջ դերը սոցիալատական շինարարութեան գործում: «Կինը կալստեսութեան մեջ մեծ ուժ է»․ առաջնորդ ընկեր Ստալինի այս խոսքերը գործողութեան ծրագիր է հանդիսանում: Դաստիարակել կանանց մասսաները, նրանց ներգրավելով Կարմիր Սաչի շարքերը, նրանցից կոփելով ակտիվ ու այդ ակտիվի միջոցով մասսայական աշխատանք տանելով կանանց մեջ, դա Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեաների հիմնական խնդիրներից մեկն է: Կինը կենտրոնական դեմքն է Կարմիր Սաչի և Կարմիր Մահիկի ընկերութեան շարքերում, թե՛ ընտրովի օրգաններում, թե՛ ակտիվի շարքերում, գրութիսաններում և կուրսերում կանայք առաջնակարգ տեղ պետք է գրավեն: Կարմիր Սաչի կազմակերպութեաններէ կողմից կանանց շրջանում տարվելիք աշխատանքին և գործնական, ստեղծագործա-

կան և հասարակական գործունեյութեան մեջ նրանց ներգրավելու վրա պետք է ամենալուրջ ուշադրութեանը դարձնել:

Այդ աշխատանքի համար, վորպես հիմք պիտի ծառայի ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1935 թ. մարտի 8-ի վորոշումը «Կանանց մեջ տարվելիք աշխատանքի մասին»: Այդ վորոշման մեջ մատնանշվում է կանանց դերը Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) աշխատանքում:

Իհրենք այդ վորոշման քաղվածքները.

«Կանանց միջազգային կոմունիստական օրվա՝ մարտի 8-ի մասին»

... Բոլոր ժողովուրդներին, ՀԱՄԿԽ, պրոֆմիութեաններէ Կենտկոմին և կոոպերատիվ կազմակերպութեաններին գործնական միջոցառումներ մշակել, վորոնք ապահովում են կանանց կազմերի հետագա հողատար անցումը նկատի ունենալով՝

ա) բանվորուհիներն ու կոլտնտեսուհիներն լայն ընդգրկումը քաղաքական, արտադրական ուսուցման մեջ և հանրակրթական դպրոցներում:

բ) լավագույն հարվածային կանանց առաջընթացումը վորակավոր և ղեկավար աշխատանքների համար:

գ) Կենդանիության օրինականութեան ամրապնդումը կանանց աշխատանքի պաշտպանութեան տեսակետից:

դ) մասսայական դաստիարակչական աշխատանքի ուժեղացումը՝ դեռ վորոշ տեղերում հին հասարակարգի մնացորդները կենցաղից արմատախիլ անելու համար, մասնավորապես կնոջ կենցաղից:

Պաշտպանելով, Ֆիզկուլտուրայի Համամիութենական Խորհրդին, Ռուսաստանի Կարմիր Սաչի ընկերութեանը՝ աշխատանք ծավալել ավելի լայն ներգրավելու բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին պաշտպանութեան և սանիտարական-լուսավորական աշխատանքի ու Ֆիզկուլտուրայի շարժման մեջ:

Մարդային, յերկրային գործկոմներին, ինքնավար հանրապետութեաններին Կենտրոնական Գործադիր Կոմիտեաներին՝ կազմակերպել կանանց գործնական աշխատանքի ղեկավարութեանը Խորհուրդներում, նրանց սեկցիաներում ու մասսայական վերահսկողութեան օրգաններում, հատուկ ուշադրութեան նվիրել կանանց առողջ ինքնազորունեյութեան և նախաձեռնութեան կազմակերպմանը, լայնորեն ներգրավելով բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին կուլտ-կենցաղային շինարարութեան մեջ, մա-

նամանդ դպրոցների, մանկական ու բուժական հիմնարկների, հասարակական սննդի ձեռնարկությունների, նույնպես և քաղ- յուսաբարական հիմնարկները (ակումբները, խրճիթ-ընթերցարան- ները, դաշտային կայանների, լիկկայանների) աշխատանքները բարելավման համար տարվող պայքարի մեջ:

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերության յուրաքան- չյուր անդամի ամենատաղին և բարեխղճորեն կատարելիք պար- տականությունն է՝ անդամավճարների հավաքման կազմակեր- պումը և անդամավճարների ժամանակին վճարումը:

Շատ ավելի բարդ ու դժվար է կազմակերպել ընկերության անդամների ներգրավումը գործնական աշխատանքի մեջ՝ կոմի- տեյի պլանը կենսազործելու, սլանով նախատեսված առանձին առաջադրությունները կատարելու համար:

Ակտիվիստները Կարմիր Սաչի ընկերության ամենազիտա- կից, և ամենակարգապահ անդամներն են: Գաստիարակել զիտա- կից, կարգապահ հասարակական աշխատողներ, վորոնք սովորած լինեն ռազմա-սանիտարական գործը, ահա այս է անդամների մասապի հետ տարվելիք աշխատանքի վերջնական նպատակը:

Բայց, վորպեսզի մենք կարողանանք ընկերության անդամ- ների մասսային ներգրավել գործնական աշխատանքի, հարկավոր է ակտիվ, վորի վրա կարելի լինի հենվել, վորը սերտորեն դող- ված է մասսայի հետ, հեղինակություն է վայելում բանվորա- կան միջավայրում, ակտիվ, վորը լավ է իմանում, թե ինչ խն- դիրներ է դնում իր առաջ Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ըն- կերությունը և ինչպես պիտի մասսայականացնել այդ խնդր- ները գործարանում, Փարբիկայում և կոլտնտեսության մեջ:

Ո՞ւմ պիտի ակտիվիստ համարել:

Ընկերության անդամները, վորոնք կանոնավոր ու հաջող կերպով կատարում ու զերակատարում են հասարակական պար- տականությունները, Կարմիր Սաչի կոմիտեիների առաջադրու- թյունները, վորոնք ցուցաբերում են իրենց սեփական նախաձեռ- նությունը սանիտարական պաշտպանության, յերկրի սանիտարա- կան-կուլտուրական մակարդակի բարձրացման գործում, — հենց նրանք էլ համարվում են Կարմիր Սաչի լավագույն ակտիվիստ- ները:

Սակայն յերբեմն պատահում է, վոր վոչ միայն սկզբնական կազմակերպությունների կոմիտեիների, այլ և շրջանային կոմի- տեիների անդամների մեջ լինում են վոչ գործունյա մարդիկ,

վորոնք վոչ միայն վորեւե հասարակական պարտականություն չեն կատարում, այլ նույնիսկ սխտեմատիկաբար մի քանի ա- միս չեն հաճախում կոմիտեյի նիստերին:

Ի՞նչպիսի ակտիվիստներ են նրանք:

Կոմիտեյի կանոնավոր աշխատանքի ժամանակ, Կարմիր Սա- չի շատ անդամներ սխտեմատիկաբար հետաքրքրվում են Կար- միր Սաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպություն- ների բազմատեսակ և ողտակար գործունեյությամբ և ինքներն էլ ընկերության ակտիվ անդամներն են դառնում:

Մի քանի ընկերներ, հետաքրքրվելով ընկերության աշխա- տանքներով, իրենք ներկայանում են կոմիտեյին, առաջարկում են և ցանկություն են հայտնում իրենց ողնությունն այս կամ այն գործնական միջոցառումներն անցկացնելու գործում: Բայց սխալ կլինենք, յեթե մենք հույս դնելինք ինքնահուսի վրա: Կար- միր Սաչի կոմիտեիները պետք է իրենք հայտարարեն ակտիվ ի- րենց սկզբնական կազմակերպություններում և նրան աշխատան- քի մեջ ներգրավեն:

Պետք է հաստատ հիշել, վոր, յեթե Կարմիր Սաչի կոմիտե- ները վոչ մի գործնական աշխատանք չեն տանում իրենց ձեռ- նարկություններում, նրանց մոտ սովորաբար ակտիվ չի լի- նում:

Ակտիվն ստեղծվում ու դաստիարակվում է գործնական աշ- խատանքի ընթացքում, սանիտարական որեր անցկացնելու ժա- մանակ, յերթերում, արտադրական և կուլտուրական հիմնար- կությունների սանիտարական վիճակի ստուգման արշավներում, ակտիվը կոմիտեյում է՝ մաքրության, բանվորների կուլտուրական- կենցաղային սապրատրիման գործի բարելավման համար տար- վող պայքարի ընթացքում:

Ակտիվը դաստիարակվում է «ՊԱՍՊ» խմբակներում, ռազ- մա-սանիտարական գիտելիքների խմբակներում, Կարմիր Սաչի քույրերի դպրոցներում և այլ կուրսերում, վորոնք կազմա- կերպվում են Կարմիր Սաչի կոմիտեիների կողմից ռազմա-սանի- տարական գործը սովորած կազմեր պատրաստելու նպատակով:

Վորակավորված ու ստուգված ընկերներին ղեկավարելու համար պետք է ակտիվի հետ անցկացնել կանոնավոր պարապ- մունքներ և այդ ակտիվի հավաքներ: Այդպիսի հավաքներում, բացի տեսական պատրաստություն տալուց, պետք է անցկացնել նաև ակտիվիստների գործնական ուսուցում:

Առանձին շրջանային կոմիտեները կազմակերպում են շրջանային ակտիվի կարծատե սեմինարներ և կուրսեր՝ լավ ակտիվիստներ պատարասելու համար:

Յուրաքանչյուր ակտիվիստ անպայման պետք է տիրապետի այն գիտելիքներին, վորոնք սահմանված են «ՊԱՍՊ» կրթքանդանի նորմաները հանձնողների համար:

Զի կարելի կարմիր Սաչի ակտիվիստ լինել և չհանձնել «ՊԱՍՊ» կրթքանդանի նորմաները: Կարմիր Սաչի յուրաքանչյուր ակտիվիստ պետք է «ՊԱՍՊ» նշանակիրը լինի:

Ակտիվիստները պետք է ծանոթանան Կարմիր Սաչի մամուլին, կարգան սանիտարական պաշտպանութան վերաբերյալ դրբականութուն, բաժանորդագրվեն ու կարգան «Սանիտարական Պաշտպանութան համար» ժուրնալը (ոտևերեն լեզվով), մասնակցեն իրենց սկզբնական կազմակերպութան աշխատանքի փորձը մամուլի, պատի թերթի և ժուրնալի եջերում լուսաբանելու դործին:

Առանձին ակտիվիստների միջև պետք է անհատական սոցիալիստական մրցակցութան պայմանագիր կնքել: Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեները պետք է պարբերաբար (1—2 ամիսը մեկ անգամ) հավաքեն իրենց ակտիվիստներին, լսեն առանձին ակտիվիստների զեկուցումն իրենց կատարած աշխատանքի մասին, տալով նրանց աշխատանքի զնահատականը, ոգնեն նրանց խորհուրդներով, հեղինակավոր ցուցումներով, ստուգեն կնքած պայմանագրերը և ուղղեն նրանց աշխատանքի բացերը:

Պետք է խրախուսել ամենալավ ակտիվիստներին: Ակտիվիստները պետք է դզան իրենց նկատամար կոմիտեյի ունեցած հողատարութունը: Պետք է այնպիսի դրություն ստեղծել, վորի ժամանակ ակտիվիստը վստահ լինի, վոր կոմիտեն նրան ցույց կտա սխտեմատիկ ողնություն՝ թե իր վրա վերցրած հասարակական պարտականությունները կյանքում կիրառելու դործում և թե՛ իր անձնական կյանքում հանդիպած այս կամ այն զվարությունների ժամանակ:

Հավազույն ակտիվիստներին խրախուսելով, զուգընթացաբար պետք է ողնել նաև հետ մնացողներին: Այդ նպատակով նրբանց պետք է ամբացնել ավելի փորձված, ուժեղ և հին ակտիվիստներին, վորոնք պետք է ողնեն՝ վերացնելու այն պատճառները, վորոնք խանգարում են նրանց աշխատանքը:

Հավազույն ակտիվիստներին պետք է առաջ քաչել շրջանային և մարզային կոմիտեներում ընտրովի պաշտոններ վարելու և նչել թեկնածուներ Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կոնֆերանսների ու համազումարների աշխատանքներին մասնակցելու համար: Կարմիր Սաչի հասարակական աշխատանքում որինակելություն ցուցաբերած ակտիվիստները պետք է հաչլի առնվեն սկզբնական կազմակերպության մեջ:

Յուրաքանչյուր ակտիվիստի համար պետք է հատուկ քարտ ունենալ, վորպեսզի սկզբնական կազմակերպության կոմիտեն, շտապ առաջադրություններ տալու անհրաժեշտության դեպքում, կարողանա արագ ընտրել իրեն հարկավոր մարդուն, վորը լավ կհատարի տրված առաջադրությունը և վորի վրա վստահ կերպով կարելի յե հույս դնել, վորպես վստահելի ստուգված հասարակական աշխատողի:

Մի քանի կոմիտեներ իրենց մոտ մտցրել են իրենց ակտիվի կանոնավոր հաչվառումը: Հատուկ հաչվառման քարտերում դրբանցվում է ակտիվիստի աղզանունն ու հասցեն և այն ամենը, ինչ վերաբերում է նրա հասարակական աշխատանքին. ինչ հասարակական բեռնավորում (նազրուղի) նա ունի, ինչպես է նա այդ աշխատանքը կատարում, ինչ պատրաստություն ու ընդհանուր դարգացում—վորակավորում ունի տվյալ ակտիվիստը:

Այդպիսի հաչվառումը, անկասկած, նպատում է կոմիտեյին ակտիվի կանոնավոր և ճիշտ ընտրությանը: Յուրաքանչյուր կոմիտե, իր մոտ ակտիվի այդպիսի հաչվառում ունենալով, միշտ կարող կլինի անխալ ընտրել իրեն հարկավոր ակտիվիստներին և ժամանակին կատարել նչված միջոցառումները:

Յեթե այդ հաչվառումը մեզ հարկավոր է մեր ամենորյա դործնական աշխատանքում, ապա դժվար չե պատկերացնել, թե վորքան կարևոր է Կարմիր Սաչի կոմիտեյին, վորպես սանիտարական—պաշտպանական կազմակերպության համար, պատրաստել և ունենալ այնպիսի ակտիվ, վորը միշտ պատրաստ լինի բժշկական ողնություն ցույց տալու և սպասարկելու հիվանդներին ու վիրավորներին, հասարակական ողնություն ցույց տալու դժբախտ պատահարների, փլվածքների, հրդեհների, հեղեղումների ու տարերային աղետների ժամանակ: Վոչ մի ակտիվիստ Կարմիր Սաչի սկզբնական կազմակերպության կոմիտեյի ուչադրությունից ու զեկավարությունից դուրս չպիտի լինի:

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Սկզբնական կազմակերպություններում աճում ու դաստիարակվում է Կարմիր Սաչի ակտիվը: Սկզբնական կազմակերպությունը Կարմիր Սաչի կազմերի դարբնոցն է: Յեթե վատ են աշխատանքը սկզբնական կազմակերպությունները, ուրեմն վատ է աշխատանքը վողջ շրջանում, մարդում:

Կարմիր Սաչի և Կարմիր Մահիկի ընկերությունը մասսայական հասարակության կազմակերպություն է: Ընկերությունը պետք է սերտորեն կապված լինի մասսայի հետ, իսկ դրա համար սկզբնական կազմակերպության կոմիտեն պետք է հմտորեն ղեկավարի իր մասսայական աշխատանքը:

Մասսայական աշխատանքի վորակը պետք է ձգտել ել ավելի բարձրացնելու: «Ագիտացիան պետք է լինի աշխույժ, գրավիչ, կոնկրետ, քաղաքականապես սուր, անկեղծ և ճշմարիտ: Պետք է ճանաչել և ուսումնասիրել այն մարդկանց, վորոնց մեջ տարվում է աշխատել, թե ինչն է նրանց հուզում, ինչով են նրանք հետաքրքրվում, վորպեսզի կարելի լինի ուղիներ գտնել դեպի նրանց գիտակցությունը, դեպի նրանց դժբախտությունները, համոզել նրանց և բարձրացնել մինչև կոմունիզմի դադափարն ու կուսակցության քաղաքականությունը հասկանալու մակարդակը» («Պրավդա», 7 ապրիլի 1935 թ.):

Սկզբնական կազմակերպությունների հաշվետվություններին ծանոթանալիս և նրանց աշխատանքը ստուգելիս, կարելի չէ հայտնաբերել բազմաթիվ լուրջ թերություններ — դա մասսայական աշխատանքի վատ դրվածքի արդյունքն է:

Մեզ մոտ, Կարմիր Սաչի կոմիտեներում դեռ գոյություն ունեն ֆինանսական կարգապահության խախտումներ, տեղի չեն ունեցել հասարակական միջոցների վաստակների, ղեղծարարությունների ղեպեր:

Մասսայից կտրված լինելը հող է ստեղծում այդպիսի ղեղծարարությունների համար: Այնտեղ, վորտեղ իսկական մասսայականություն չկա, տեղի չեն ունենում հասարակական միջոցների հախճապակումներ, ժուրիկներ և հատկապես կազմակերպությունն անձնական շահերի համար ոգտադործում և այլն:

Ընդհանուր ժողովներում արվող զեկոնցումները պետք է միշտ սեղմ և բովանդակալից բնույթ կրեն: Ժողովները պետք է անցկացնել նաև առանձին ցեխերում, նույնիսկ առանձին բրի-

դաղներում: Այդ ժողովները միշտ պետք է կապակցված լինեն քաղաքական դեպքերի հետ: Զրույցներ անցկացնելիս, պետք է հմտորեն պատմել, թե Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) հասարակական աշխատանքն ինչ չափով է հանդիսանում այն հսկայական սոցիալիստական շինարարության բաղադրիչ մասը, վորը կատարվում է մեր մեծ յերկրում:

Փաստորեն կատարած աշխատանքի կոնկրետ արդյունքները, վոր կազմակերպված է Կարմիր Սաչի ուժերով ու միջոցներով, նույնպես և սովյալ կոլեկտիվում տարվելիք առաջիկա աշխատանքը և այդ աշխատանքի քաղաքական նշանակությունը պետք է կազմեն յուրաքանչյուր զրույցի բովանդակությունը: Յեթե բում, բրիդաղներում պետք է բացատրել անդամների մասսային, թե ինչ նպատակների յեն ծառայում Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) միջոցները և ինչպես են ոգտադործվում Կոմիտեի դրամարկղը, մանող անդամավճարները:

Ընկեր Ուսպենսկին (ՅԱԳԻ դործարան) այսպես է ասում իր մոտ, դործարանում Կարմիր Սաչի դժով իր կատարած աշխատանքի մասին.

«Յես կարողացա անդամների մասսայական հավաքադրում անկացնել դործարանում միմիայն շտորհիվ նրան, վոր յես սերտ կապ եյի պահում ցեխի կուսակցական, պրոֆմիտեենական կազմակերպությունների և սղմինխտարացիայի հետ: Յես ինձ շըրջապատել եմ այնպիսի ակտիվով, վորն սկզբում ընդամենը մի քանի մարդուց եր բաղկացած:

Իմ առաջին աշխատանքն ընկերության անդամների հավաքադրումն եր: Ծնորհիվ ցեխում տարած լավ բացատրական աշխատանքի՝ ճաչի ընդմիջումների ժամանակ կարձ, բայց վառ ու բավանդակալից զրույցների ձևով, դործարանում մենք դարձանք առեհարադմաթիվ և ուժեղ հասարակական կազմակերպությունը:

Հենց վոր մասսան հանդես յեկավ, մենք սկսեցինք աշխատանք տանել՝ աշխատանքի տեղի մաքրության համար պայքար մղելու ուղղությամբ: Կարմիր Սաչի ըտլոր անդամները կարգի բերին իրենց աշխատանքի տեղերը, իրենց դադգյահները, ձգվեցին, սկսեցին ավելի ճշտապահ և մաքուր աշխատել»:

Մասսայական աշխատանքը պետք է անցկացնել վոչ միայն ցեխերում զրույցների ձևով:

Ընկեր Մենիկովյան «Մոլոտովի անվան» դործարանում մաս-

տայական աշխատանքն անց է կացրել նաև բանվորական հանրա-
կացարաններում: Այնտեղ կեղտոտություն ու թափթփիվածու-
թյուն է յեղել: Առանձին բանվորական ընտանիքների հետ ան-
հատական զրույցներ է անցկացրել տնային պայմաններում: Ակ-
տիվ է կազմակերպել: Վարչությունից բոլոր սենյակներին հա-
մար յերկաթե մահճակալներ է ստացել, նույնպես և վերմակ-
ներ, սավաններ, անկողինների անհրաժեշտ լրիվ կոմպլեկտներ:
Դրանից հետո Կարմիր Սաչի կազմակերպութունը մասսայական
է դարձել և մեծ հեղինակություն է վայելում գործարանում:
Կարմիր Սաչի աշխատանքի պլանների և սոցալայմանադրերի կա-
տարումն ստուգվում են գործարանի կուսակցական և պրոֆմիու-
թենական կազմակերպությունների մասնակցությամբ: Այդ
գործարանում Կարմիր Սաչի 208 հարվածայիններ կան:

Յերբ հարկավոր է մասսայական շաբաթորցակ կազմակեր-
պել, առաջադրություններ են տրվում իրենց ցեխային կազմա-
կերպիչներին, նրանք աշխատանքի յեն կանչում այնքան մարդ,
վորքան հարկավոր է: Շաբաթորցակները միշտ բազմաթիվ են
լինում և մեծ վողեկորությամբ են անցնում:

Նույն ձևով էլ անց է կացնում ընկեր Փարզմանն «Ստանկո-
լիտ» գործարանում: Ահա թե ինչ է պատմում իր մասսա-
յական աշխատանքի մասին.

«ՌԿՍԸ անդամների հավաքադրումը մենք անց ենք կաց-
նում ճաշի ընդմիջումների ժամանակ, յերբ բանվորները հա-
վաքվում են կարմիր անկյունում, այնտեղ զրույցներ ենք անց-
կացնում սանիտարական պաշտպանության մասին, Կար-
միր Սաչի աշխատանքի մասին, ասում ենք, թե Կարմիր Սաչի
գծով ինչ աշխատանք պիտի տանենք մեր գործարանում: Մենք
միշտ մեր զրույցները կապակցում ենք քաղաքական դեպքերի
հետ, որինսակ, մեծ վողեկորությամբ զրույցներ ենք անցկացրել՝
Կարմիր Բանակի 17-րդ տարեդարձի և Սորհուրդների 7-րդ հա-
մագումարի կապակցությամբ: Զրույցների ժամանակ մենք նը-
շում ենք ցեխերում տարվելիք Կարմիր Սաչի աշխատանքների ա-
պագա կազմակերպիչներին: Այսպիսով, մասսայական բացառ-
րական աշխատանք կատարելով, մենք նոր անդամներ ենք հա-
վաքադրում, ակտիվ ենք սետղծում: Աշխատանքն անց ենք կաց-
նում վոչ միայն ցեխերում, այլ և բանվորական բարակներում:

Մեզ մոտ կա ՌԿՍԸ անվան մեր սեփական հարվածային բը-
րեգադը գործարանային ճաշարանի աշխատողներից: Բրիգադը

հետևում է սննդի վորակին, ճաշարանի կանոնավոր մաքրությա-
նը:

Ամենորյա գործնական աշխատանքի, զրույցների ընթացքում
մենք դաստիարակում, անեցնում ենք մեր հասարակական ակ-
տիվը: Կարմիր Սաչի մեր ակտիվը մրցակցում է «Բորեց» գոր-
ծարանի հետ:

Կարմիր Սաչի կոմիտեները ներկցվում են կարևորագույն
մասսայական քաղաքական կամպանիաների անցկացմանը, ի-
րենց վրա վորոշ սոցալարտավորություններ են վերցնում, բան-
վորական մասսայի առաջ հաշվետու ղեկուցումներ են տալիս
նրանց կատարման մասին»:

«Շկիրյատովի անվան» գործարանում ընկեր Նեյը հաշվետու
ղեկուցում է տվել՝ Սորհուրդների VII համագումարի անվան
արտադրական արշավին Կարմիր Սաչի կազմակերպության մաս-
նակցության արդյունքների մասին, ըստ վորում կոմիտեյին հա-
ջողվել է գերակատարել իր պլանը: Կոմիտեն իր աշխատանքը
լուսաբանել է գործարանային թերթում, հրատարակել է իր
բյուլետենը Կարմիր Սաչի ցեխային կազմակերպիչների աշխա-
տանքի պլանների կատարման վերաբերյալ:

Այդ գործարանում գոյություն ունեն Կարմիր Սաչի ար-
տադրական բրիգադներ, «Կարմիր բանակի XXV ամյակի անվան»,
«Մարտի 8-ի անվան» և այլն:

Արտադրական բրիգադները 100 տոկոսով բրիգադների վորջ
կազմն ընդդրկել են Կարմիր Սաչի անդամության շարքերը: Բը-
րիգադների անդամներն ամենալավ արտադրողներն են: Այդ
բրիգադները Կարմիր Սաչի ակտիվի հետ միասին որապահու-
թյուն են արել ջրերի հորդացումների դեմ պայքար մղելու ժա-
մանակ, մասնակցել են շրջանային կոմիտեյի կողմից կազմա-
կերպված արշավներին:

Վերևում բերված որինակներից յերևում է, թե վորքան
խոշոր է ձեռնարկություններում հաջող դրված մասսայական
աշխատանքի նշանակությունը:

Կարմիր Սաչի կազմակերպությունները մասսայական աշ-
խատանքի կարգով կազմակերպում են դասախոսություններ, զը-
րույցներ, ՌԿՍԸ անկյուններ, Կարմիր Սաչի աշխատանքը լու-
սաբանող ցուցադրեր, հրատարակում են պատի թերթեր,
բյուլետեններ, կախում են լողուններ ու պլակատներ, կազմա-

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԶԲՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

կերպում են ազխարբիղաղները յերևութներ, վարոնց համար նյութներ են պատրաստում սանիտարական պաշտպանութեան գործով իրենց կատարած աշխատանքի մասին, անց են կացնում երկրորդականներ ղեկավարութեան հիմնարկները, կազմակերպում են հարցերի ու պատասխանների յերեկոներ, Կարմիր Սաչի յերեկոներ, Կ. Սաչի զբոսանքներ, կազմակերպում են «ՊԱՍՊ» կարծրաշանակիրների, խմբակների, կուրսերի շրջանափարտների արձակուրդներ, կազմակերպում են դրոժխնանք, ողորդող-ծում են ուղղիտ: Կազմակերպում են գեղարվեստական և Կարմիր Սաչի զբաղանդութեան ընթերցումներ, կազմակերպում են սանիտարական նորութեան յատկանքներ, ազխարբիղաղներ, թատերական բեմադրութեաններ և այլն:

Կարելի է ղեկավարել Կարմիր Սաչի անկյունների, ցուցաբերել իրենց կազմակերպման սքեմաներն ու պլանները: Կարևոր է հիշել, վոր դրանք պետք է հետաքրքիր լինեն, ձևակերպված լինեն պարզ և վառ գույներով, վորպեսզի այդ ցուցաբերողների վերա և անկյուններում արտացոլված լինի վոր միայն Կարմիր Սաչի տեղական կազմակերպութեան աշխատանքը (անդամների քանակը, ակտիվի առկայութեանը, լավագույն ակտիվիստների լուսանկարները, նրանց կատարած հասարակական աշխատանքի ցուցակը և այլն):

Անկյունում պետք է արտացոլվի Կարմիր Սաչի կոմիտեյի աշխատանքի բոլոր հիմնական տեսակները, նրա պլանը, կոնսոլիդացիան և նրանց կատարման ընթացքը: Այդ անկյունում պետք է կազմակերպված լինի տեղեկանքային աշխատանք, Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ակտիվիստների որպաշուկութուն:

Այն առաջադրութեանները, վորոնց կատարման համար տրվյալ ժամանակամիջոցում պայքարում է Կարմիր Սաչի կազմակերպութեանը, պետք է ճիշտ արտացոլված լինեն անկյուններում, ցուցաբերված, պատի թերթերում, նրա լողուններում ու պլակատներում, Կարմիր Սաչի հարվածայինների հավաքներում, ակտիվի խորհրդակցութեաններում և այլն:

Մասսայական աշխատանքի այդ բոլոր տեսակները պետք է հիմնականում մի նպատակի ծառայեն, այն է՝ մոբիլիզացիայի յենթարկել բանավորական մասսայի ուղղորդութեանը յերկրի սանիտարական պաշտպանութեան ամբապնդման հարցերի շուրջը, բացատրել սոցիալիստական շինարարութեան մեջ Կարմիր Սաչի հասարակական կազմակերպութեանները ղեկն ու նշանակութեանը:

Հարվածայիններն ու հարվածայնութեանները՝ Փարբիկաներում, գործարաններում, խորհրդակցութեաններում, կուրսանդանութեաններում և ՄՏ Կայաններում առաջատար մարդիկն են: Աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունքի ներմուծներ ցույց տալով, նրանք առաջ են տանում յետ մնացողներին, ոգնում են նրանց՝ իրենց վործով ու գիտելիքներով: Սոցիալիստական շինարարութեան բոլոր Փրոտներում մեր աշխատանքի պրակտիկայի մեջ:

Սկզբնական կազմակերպութեանների հասարակական աշխատանքում սոցիալիստական մրցակցութեանն անշեղորեն դրական արդյունքներ է տալիս: Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեները սոցիալիստական հիման վրա բարձրացնում են իրենց աշխատանքի վորակը, բարձրացնում են անդամների մասսայի ակտիվութեանը:

Հենվելով լավագույն ակտիվիստների — սանիտարական պաշտպանութեան հարվածայինների վրա, կոմիտեները կարող են իրենց աշխատանքի շուրջը լայնորեն ծախվել սոցիալիստական մրցակցութուն և այդ ձևով ապահովել իրենց պլանի կատարումը և մի շարք դեպքերում նույնիսկ գերակատարումը:

Սոցիալիստական մրցակցութունը պետք է կազմակերպված լինի ներքին: Կարմիր Սաչի անդամ՝ առանձին ակտիվիստներն իրենց վրա պարտականութեաններ են վերցնում Կարմիր Սաչի հասարակական աշխատանքի ուղղութեամբ և մրցման են հարավիրում իրենց բրիգադի ընկերներին: Սոցիալիստական պետք է ավելի բարձր աստիճանի հասցնել, կազմակերպելով սոցիալիստական գործերի կնքումը զանազան ցեխերի և ձեռնարկութեանների միջև:

Յուրաքանչյուր սոցիալիստական պայմանագրի վերցրած սոցիալիստականութեանը պետք է սխտեմատիկորեն ստուգվի: Սոցիալիստական ստուգումն անհրաժեշտ պայմանն է, վորն ապահովում է նրա կատարումը:

Կույտերով դարձած և գործին կարած ստանդարտ բովանդակութեամբ սոցիալիստական գործերը, վորտեղ մնում է միայն թիվը գնել ու ստորագրել, դա — սոցիալիստական մրցակցութեան դադարի կոպիտ խեղաթյուրումն է:

Կոմիտեյի կազմակերպչական դերը վոչ թե նրանում է, վոր սպազորի դրոշմապսած միատեսակ «սոցպայամանադրերը», այլ նրանում, վոր յուրաքանչյուր ակտիվիստի մեջ ցանկություն ստեղծի իր վրա վերցնելու սոցպարտավորություն Կարմիր Սա- չի (Կարմիր Մահիկի) աշխատանքին և սանխտարական պաշտպա- նության ամրապնդման դործին ողնելու:

Կոմիտեյի խնդիրն է՝ նաև հատորեն կազմակերպել կնքված սոցպայամանադրերի փոխադարձ ստուգումը:

Իրենց սոցպարտավորությունները կատարած ակտիվիստնե- րին պետք է խրախուսել, նրանց մեջ ցանկություն դաստիարա- կելով ել ավելի լավ աշխատելու, պարզեատրելով իրենց կազ- մակերպության սանխտարական պաշտպանության լավագույն հարվածայիններին, նրանց աշխատանքը ցույց տալ բանվորական և կոլտնտեսային մասսաներին, նրանց աշխատանքը լուսաբանելով մամուլում, հաշվետու ղեկուցումների ժամանակ: Յուրաքանչյուր կոմիտեյի խնդիրն է՝ աստիճանաբար սոցմըր- ցակցության մեջ ներգրավել իր վողջ ակտիվը, սկսած Կարմիր Սաչի կոմիտեյի անդամներից, ցեխային կազմակերպչներից, սանպոստերի պետերից, խմբակների ղեկավարներից և այլն, սոցմըրցակցության մեջ ներգրավելով Կարմիր Սաչի ակտիվի վողջ մասսան:

Այսպես որինակ, ընկեր Ոբրետայելը— «Կրասնի մետալիստ» գործարանի Կարմիր Սաչի սկզբնական կազմակերպության գոր- ծարանային կոմիտեյի նախագահն—իր վրա այսպիսի պարտավո- րություններ է վերցնում:

1. Առ 1 մայիսը ՌԿԽԸ-ի անդամներ ներգրավել—35 մարդ:
2. Առ 15 մայիսի 35 թ. կազմակերպել — 4 սանպոստ:
3. Լիովին հավաքել իր ցեխում 1935 թվի յերկրորդ յեռա- մայակի անդամավճարները:
4. Մինչև մայիսի 1-ը բաց թողնել 45 կրծքանշանակիրներ:
5. Ապրիլի 5-ին կազմակերպել բժշկի դասախոսությունն ալ- կոհոլիզմի դեմ պայքարի մասին:
6. Վերցնել գործարանի յենթաշեֆ դպրոցի 4-րդ դասարա- նի անհատական շեֆությունը:
7. Մինչև ապրիլի 20-ը 3 մարդ նշանակել փակ բանվորա- կան կոոպերատիվի, բուֆետի և ճաշարանի սանխտարական վի- ճակի ստուգման համար:

8. Մինչև մայիսի 1-ը կազմակերպել ցեխում ՌԿԽԸ անվան հարվածային բրիգադ:

9. 3 հոգված տալ պատի թերթին (ապրիլ—մայիս):

10. Մինչև մայիսի 1-ը կազմակերպել Կարմիր Սաչի (Կար- միր Մահիկի) անկյուն:

Անհատական սոցպարտավորությունները սոցմըրցակցության հիմքն են ծառայում: Դրանք պետք է միանշամայն ճշգրիտ լի- նեն, յուրաքանչյուր պարտավորության համար պետք է սահ- մանված լինեն կատարման ժամկետները: Պարտավորություննե- րի կետերն այնպես պիտի խմբադրել, վոր նրանք կոնկրետ, հասկանալի և մատչելի լինեն ստուգման համար:

Սոցմըրցակցության մեջ խոշոր տեղ կարող է դրավել բան- վորական յերիտասարդությունը և առաջին հերթին կոմյերիտա- կանները — «ՊԱՍՊ» կրծքանշանակիրները, վորոնք ներկայումս մեծ քանակությամբ կան ամեն մի ձեռնարկության և կոլտնտե- սության մեջ:

«Թեթև հեծելագործի» ջոկատներն ու բրիգադները պետք է ներգրավված լինեն սոցմըրցակցության մեջ նաև Կարմիր Սաչի հասարակական աշխատանքի գծով, և բանվորական յերիտա- սարդության սոցպայամանադրերի մեջ պարտավորությունների առանձին կեստ՝ պիտի մտցնել «ՊԱՍՊ» կրծքանշանի նորմաների հանձնման, Կարմիր Սաչի անդամ դառնալու, սանխտարական պոստերին ողնության դալու գործում ակտիվ աշխատանք ցու- ցաբերելու վերաբերյալ:

Յերիտասարդությունը Կարմիր Սաչի աշխատանքներում սոցմըրցակցության և հարվածայնության առաջամարտիկը պիտի լինի ճիշտ այնպես, ինչպես այդ անում է նա իր ձեռնարկու- թյան մեջ արտադրական ցուցանիշների նկատմամբ:

Կոմիտեյի առանձին անդամների և ակտիվիստների կողմից իրենց վրա վերցրած անհատական պարտավորություններից կազ- մըվում են սոցպայամանադրեր, վորոնք սպահովում են կոմիտե- յի վողջ պլանների կատարումը:

Ահա թե ինչպես են մրցակցում Կարմիր Սաչի յերկու կազ- մակերպությունները ՌԿԽԸ աշխատանքի ավելի լավ դրվածքի համար. «Նոգլինի անվան» Փաբրիկան և ավտոբուսային պարկը Մոսկվայում (Ձեթի նստու շրջան):

ՍՈՑՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Առաջին Ավտորուսային պարկի ՌԿՍԸ կոմիտեն սոցմրցակցութեան և հրավերում «Նոգլինի անվան» Ֆարբիկայի ՌԿՍԸ կոմիտեին և սանիտարական պաշտպանութեան աշխատանքի ամբապընդման համար և իր վրա յե վերցնում հետևյալ պարտավորութեանները:

1. Կազմակերպել սույն թվի մինչև մայիսի 15-ը Կարմիր Նաչի սեմինարիա (ընկ. Կիրսանովա):
2. Մտուզել բոլոր կազմակերպիչների աշխատանքը և ամբացնել նրանց՝ իրենց աշխատանքի բնազավառներում (ընկ. Սոկոլով):
3. Պատրաստել «ՊԱՍՊ»-ի 40 կրծքանշանակիրներ և նրանց բաց թողնել ԲԳԿԻ 17-րդ տարեդարձին ս. թ. փետրվարի 23-ի հանդիսավոր նիստին (ընկ. Սոկոլով):
4. Մինչև մարտի 23-ը կազմակերպել ՌԿՍԸ անկյուն, և մինչև 25-ը՝ ՌԿՍԸ յերեք անկյուն:
5. Մինչև 1935 թ. մարտի 20-ը կազմակերպել ՌԿՍԸ ցուցադրական աշխատանքի վահան 1-ին Ավտորուսային պարկի ապակեբում (ընկ. Կոչնով):
6. Լավ վիճակի բերել զեղարկղները և զբանցել ոգնութեան ցույց տալու բոլոր զեպքերը (ընկ. Կալենկով):
7. Ճաշարանում նշանակել 2 սանպոստ (ընկ. Սոկոլով):
8. Մինչև ս. թ. մարտի 25-ը ստուգել պարտավորութեանների կատարումը «ՊԱՍՊ»-ի նորմաները հանձնելու համար 10-րդ դժով (ընկ. Կոչնով):
9. ՌԿՍԸ անդամներին թիվը հասցնել 400 մարդու, ընկերութեան նոր անդամներ ներգրավել 150 մարդ (պատասխանատու յե ընկ. Կիրսանովան):
10. Նյութեր տալ պատի թերթին՝ մինչև 35 թվի ապրիլի 1-ը 4 հոդված ՌԿՍԸ կոմիտեյի աշխատանքի հարցերի վերաբերյալ (պատասխ. ընկ. Կալենկով):
11. Սոցմրցակցութեան կազմակերպել բրիգադների կազմակերպիչների միջև (պատասխ. ընկ. Դոբրովոլսկի):
12. Մինչև 35 թվի մարտի 10-ը զեղարկղները բանվորներից կազմակերպել «ՊԱՍՊ» խմբակ (պատասխ. ընկ. Լըխով):
13. Լավ հաշվառում կազմակերպել ՌԿՍԸ աշխատանքի բոլոր տեսակների համար (պատասխ. ընկ. Լըխով):

14. Կազմակերպել ուղմա-սանիտարական դրուժինա մինչև ս. թ. ապրիլի 19-ը (պատասխ. ընկ. Լըխով):

Պայմանագրերն ուժի մեջ և 1935 թվի փետրվարի 20-ից մինչև մայիսի 1-ը:

Ավտորուսային պարկին կից ՌԿՍԸ կոմիտեյի
Յախագահ՝ ՏԵՐԵՆՏՅԵՎԱ.

Ավտորուսային պարկի ՌԿՍԸ կոմիտեյի կողմից ուղարկված մրցահրավերն ընդունված և «Նոգլինի անվան» Ֆարբիկայի ՌԿՍԸ կոմիտեյի կողմից և դրա պատասխանն ստացվել և հետևյալ սոցմրցման պայմանագրի ձևով:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Նոգլինի անվան» Ֆարբիկայի և ավտորուսային պարկի միջև սոցմրցակցութեան՝ ՌԿՍԸ աշխատանքն ավելի լավ կազմակերպելու համար:

Մենք ընդունում ենք մրցահրավերը և մեզ վրա յենք վերցնում հետևյալ պարտավորութեանները:

1. Անդամների թիվն առաջին յեռամսյակում 510 մարդուց հասցնել 900 մարդու: Ժամկետ 25 ապրիլի 1935 թ.:
2. Առաջին յեռամսյակում՝ մինչև 1935 թվի մարտը բաց թողնել «ՊԱՍՊ» կրծքանշանակիրներին 250 մարդ (պատ. ընկ. Նիկիտինա):
3. Կանոնավոր կերպով ամիսը մեկ անդամ հրատարակել ՌԿՍԸ բյուլետեններ: Ընդամենը լույս ընծայել 3 բյուլետեն:
4. Կարգի բերել ՌԿՍԸ բոլոր անդամներից անդամավճարներ ստանալու հաշվառումը. ժամկետ առ 1-ն ապրիլի 1935 թ. (պատասխ. ընկ. Պոտյոմկինա):
5. Կազմակերպել մինչև մարտի 4-ը ուղմա-սանիտարական դրուժինաների 2 պարապմունք (պատ. ընկ. Պոտյոմկինա):
6. Մինչև մարտի 10-ը զեղարկղները լրացնել զեղորայքով և ամբացնել սանպոստերը (պատ. ընկ. Յելիսեյեվա):
7. Մրցակցութեան անցկացնել բրիգադներում կազմակերպիչների միջև (պատ. ընկ. ընկ. Բելյայեվա և Վասիլյեվա):
8. Մինչև ապրիլի 20-ը ստուգել ՌԿՍԸ անհատական ակտիվիտետների պարտավորութեանների կատարումը (պատ. ընկ. ընկ. Սիդորելևա և Կուլակովա):

9. Մինչև փետրվարի 20-ը 1935 թ. Փարբիկայի ակումբում կազմակերպել ՌԿՍԸ անկյուն (պատ. ընկ. ընկ. Սիոբելեյա և Կուլակովա) :

Նախագահ (ստորագրութուն)

Սոցիալիստական ուղևորության և հասարակական բուքսիբի կարգով կոմիտեներն ակտիվի բրիգադներ են կազմակերպում, վորոնք վորոշ ժամանակով ուղարկվում են Կարմիր Սաչի յետ մնացող կազմակերպութուններին ուղևելու՝ Կարմիր Սաչի աշխատանքներն ամրացնելու համար :

Շրջանային կազմակերպութունների կոմիտեները կարող են փորձի սխտեմատիկ փոխանակում կազմակերպել սկզբնական կազմակերպութունների առանձին կոմիտեների միջև :

Սոցմրցակցութունը հաջողությամբ կարելի յե անցկացնել «ՊԱՍՊ» խմբակների, սանպոստների, բժշկական քույրերի կուրսերի, սանիտարական դրուժինաների միջև Փարբիկայներում ու գործարաններում, խորհանտեսութուններում, կոլտնտեսութուններում, ՄՏ կայաններում, վորոնք քույրերի, «ՊԱՍՊ» կրծքանշանակիրներին հավաքներում մշակած ցուցանիշների համաձայն, մրցակցում են իրար հետ : Սոցմրցակցութունը նըպաստում է Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կուրսերում և խմբակներում անցկացվող ուսուցման վորակի բարձրացմանը :

Կարմիր Սաչի աշխատանքի բնադատվում պարտավորութունների կատարման հետ գուղընթացաբար, Կարմիր Սաչի անդամները ձեռնարկութուններում, խորհանտեսութուններում և կոլտնտեսութուններում իրենց վրա վերցնում են արտադրական բնութ կրող պարտավորութուններ :

Յեխերում Կարմիր Սաչի և Կարմիր Մահիկի անվան հարվածային բրիգադներ են կազմակերպվում, վորոնց մեջ են մտնում ակտիվիստները և հարվածայնության մեջ են ներգրավվում ընկերության շարքային անդամները :

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) դաստիարակչական հասարակական աշխատանքը ձեռնարկութուններում, խորհանտեսութուններում և կոլտնտեսութուններում սանիտարական պաշտպանության աշխատանքի աճի հետ միասին պետք է տա աշխատանքի արտադրողականության բարձրացում, պլանի կա-

տարում և աշխատանքի ավելի լավ վորակ : Կարմիր Սաչի և Կ. Մահիկի անվան հարվածային ցեխերն ու բրիգադները պետք է իրենց աշխատանքում ավելի լավ ցուցանիշներ տան արտադրության մեջ :

Սոցմրցակցութունն ու հարվածայնութունը պետք է ել ավելի մեծ տեղ գրավեն սկզբնական կազմակերպության վողջ մասսայական աշխատանքի սխտեմում :

Սոցմրցակցության խնդիրների վրա պետք է բևեռված լինի անդամների մասսայի ուշադրութունը :

Ախնաուու և լայն մասսայի համար հասկանալի մեթոդներով պետք է ցույց տալ սոցպարտավորութունների կատարման ընթացքը, իրենց վրա վերցրած պարտավորութունների կատարման ասպարիզում առաջավոր և յետ մնացող ակտիվիստներին :

Սոցմրցակցության ցուցանիշները պետք է շարունակ մըրցակցողների աչքի առաջ լինեն : Պատի թերթերում և բյուլետեններում պետք է սխտեմատիկաբար լուսաբանել մրցակցության ընթացքը և հասնել այն բանին, վոր յետ մնացողներն անընդհատ ձգվեն :

Պատի թերթերում և Կարմիր Սաչի անկյուններում աչքի ընկնող տեղերում պետք է փայլեն լավագույն հարվածայինների, լավագույն կազմակերպիչների անունները, վորոնք առաջին հերթին ներկցվել են մասսայական պայքարի՝ սոցիալիստական հայրենիքի սանիտարական պաշտպանության ամրապնդման, լայն աշխատավոր մասսաների աշխատանքի և կենցաղի առողջացման գործին :

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՍԸ

Մեր յերկրում հսկայական աշխատանք է տարվում մասսաներին վերադաստիարակելու համար : Մասսաների վերադաստիարակման խնդիրը, նրանց ներգրավումը սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակցելու գործին՝ մեր մարտական խնդիրն է :

Սկզբնական կազմակերպութունների աշխատանքը ձեռնարկութուններում, կոլտնտեսութուններում և խորհանտեսութուններում, — դա հիմնականում նոր մարդկանց — հասարակական աշխատողների դաստիարակումն է, այնպիսի մարդկանց, վորոնց համար հասարակական շահերն ամենից բարձր

են, վորոնք անսահման նվիրված են կուսակցութեանը, միշտ պատրաստ են իրենց ուժերն ու ընդունակութիւնները նվիրելու հայրենիքի սանխտարական պաշտպանութեան ամբողջովին:

Աշխատանքը մասսայի բանվորների ու կուլանտեսականներէ հոծ բաղմուտեան մեջ պահանջում է մեծ հմտութիւն, մեծ կազմակերպչական ընդունակութիւններ, կազմերի խնամքով ընտրութիւն: Պետք է պահպանել մեր կազմերը:

Ընկ. Ստալինը Կարմիր բանակի ակադեմիականների ավարտման հանդեսում արած իր հրաշալի ճառում նոր և հոր լողունգ տվեց՝ «Կարբերն են վարձում ամեն ինչ»:

Ընկեր Ստալինն ասում է. — «Ներկայումս պետք է հենվել մարդկանց, կազմերի, աշխատողների վրա, վորոնք տիրապետել են տեխնիկային: Ահա թե ինչու հին լողունգը — «Տեխնիկան վորոշում է ամեն ինչ», վորն անցած ժամանակաշրջանի արտա-ցոլումն էր, յերբ մեզ մոտ սով էր տեխնիկայի բնագալառում, այժմ պետք է փոխարինել այն նոր լողունգով, վոր «Կազմերն են վորոշում ամեն ինչ»: Այժմս զլխաւորը սրանումն է»:

Ընկ. Ստալինի խոսքերում դժված է գործողութիւններէ ամբողջ ծրագիրը:

Կարմիր Սաչի հասարակական աշխատող կազմերի աճեցումը և նրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքը, վորտեղ վոք նրանք աշխատելիս լինեն, «Սերպի Սոլոտ» գործարանում կամ Դիքսոնի կղզում, Անդրկովկասի աուլներում կամ Ուկրաինայի կոլանտեսութիւններում, ահա թե ինչումն է այժմ կայանում մեր աշխատանքը:

Հանձարեղ կանխատեսութեամբ ընկ. Ստալինն ակադեմիականների շրջանավարտներին 1935 թվի մայիսի 4-ին ուղղված իր ճառում մեզ սովորեցնում է.

«Կազմերն են վորոշում ամեն ինչ» լողունգը պահանջում է, վոր մեր ղեկավարներն ամենահոգատար վերաբերմունք ցույց տան մեր աշխատողներին՝ «վորերին» և «մեծերին», վոր բոլոր նախապատում էլ նրանք աշխատելու լինեն, հոգատար կերպով աճեցնեն նրանց, ուղեն նրանց, յերբ նրանք ոժանդակութեան կարիք են ունենում, խրախուսեն նրանց յերբ նրանք ցուցաբե-րում են առաջին հաջողութիւնները, նրանց առաջ քաշեն» և այլ-լին:

Պետք է հիմնովին փոխել վերաբերմունքը դեպի այն կազ-մերը, վորոնք մեզ մոտ աշխատում են թե՛ հասարակական կազ-մով և թե՛ վորպես վճարովի աշխատանքում:

Յուրաքանչյուր կոմիտեի աշխատանքի վորակը պետք է գնահատել առաջին հերթին այն տեսակետից, թե նա վորքան է կարողանում հոգատարութեամբ և խնամքով աճեցնել մարդ-կանց, պահպանել նրանց մեր ընկերութեան շարքերում, առաջ քաշել նրանց աշխատանքի պատասխանատու բնագալառներում աշխատելու:

Ընկեր Ստալինի ճառը մեր ձեռքն այնպիսի գենք է տալիս, աշխատանքի այնպիսի հիանալի մեթոդ, վորոնք ընդունակ են, կյանքում նրանց ճիշտ կիրառելու ժամանակ, մինչև հիմա չը-տեսնված և նոր թափ հաղորդելու Կարմիր Սաչի հասարակայ-նութեանը մեր բաղմակողմանի ու չափազանց հետաքրքիր իրա-կանութեան բոլոր բնագալառներում:

Կարմիր Սաչի ու Կարմիր Մահիկի պատրաստված կազմերի առկայութեանը ձեռնարկութիւններում, խորհանտեսութիւններ-ում և կուլանտեսութիւններում խոշոր չափով վորոշում են Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերութեան վորջ աշխատան-քի հաջողութիւնը:

Կարմիր Սաչի և Կարմիր Մահիկի ընկերութիւնները սանի-տարական-պաշտպանութեան կազմակերպութիւններ են: Նրա վրա կառավարութեան կողմից պատասխանատու խնդիրներ են դրված պատերազմի ժամանակ հիվանդներին, վիրավորներին, գաղթա-կաններին և դերիներին սպասարկելու ուղղութեամբ: Դրա հա-մար ամենից առաջ լայ սովորեցրած, կարգապահ կազմեր են հարկավոր:

Ձի կարելի սանխտարական պոստեր կազմակերպել, յեթե սանպոստերի համար պատրաստված կազմեր չունենք, ճիշտ այնպես էլ չի կարելի հակողային պաշտպանութեան համար պատրաստ լինելու մասին խոսել, յեթե չենք կարողանում առա-ջին ուղեւթիւն ցույց տալ թունավորիչ նյութերով վնասված-ներին:

Մեր պաշտպանութեան խնդիրները մենք կկատարենք միայն այն դեպքում, յեթե մենք պատրաստենք պահանջված քանակու-թեամբ սանխտարական տեսակետից զբաղեա մարդիկ, առաջին հերթին կրծքանշանակիրներ, վորոնք լիովին հանձնել են

«ՊԱՍՊ» («պատրաստ սանիտարական պաշտպանութեան») կըրծ-
քանչանի բոլոր նորմաները:

Կադրերի պատրաստութեանը խիստ պլանայնութիւնն է պա-
հանջում: Դրա համար անհրաժեշտ է.

- ա) Ունկնդիրները կանոնավոր ընտրութիւնն.
- բ) Պարզորոշ ուսումնական պլանն և լայլ դասատուներ.
- գ) Բազմազան քանակութեամբ դիտողական պիտույքներ.
- դ) Բազմազան քանակութեամբ դիտողական պիտույքներ և
դասադրքեր.

ը) Դրամական միջոցներ, վորոնք նախատեսուած են բոլոր-
ջեյով:

ե) Դասավանդման դրվածքի և ուսումնական պարագմունք-
ների սխտեմատիկ հասարակական կոնտրոլ:

Ի՞նչպիսի վերակազմման աշխատողներ պիտի պատրաստեն
Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեները:

Կադրերի պատրաստութեանը բազմազան է յերկու հետևյալ
բաժիններէջ:

I. Կադրերի մասնայական պատրաստութիւն

- ա) «ՊԱՍՊ» կրծքանչանի նորմաների հանձնում:
- բ) Սանիտարական դրութիւնների պատրաստում:

II. Բժշկական միջին անձնակազմի (բժշկական ֆուլքերի) պատրաստութիւնը

Մեր յերկրի յերիտասարդութեանը լրջորեն պատրաստուած է
մեր Միութեան պաշտպանութեանը: Պաշտպանութեան համար
հարկավոր են Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) զիտակից, ռադ-
մա-սանիտարական դործը սովորած, կարգապահ կադրեր: Այդ-
պիսի պատրաստութեան սկիզբն է ԽՍՀՄ Կենտրոնական կող-
մից հաստատուած «ՊԱՍՊ» առաջին աստիճանի կրծքանչանի նոր-
մաների հանձնումը:

Սկզբնական կազմակերպութեանները կոմիտեները առաջ
խնդիր է դրված կանոնավոր կերպով կազմակերպել պատրաս-
տութեանը և «ՊԱՍՊ» կրծքանչանի նորմաների հանձնումն ի-
րենց ձեռնարկութեան, խորհանդեսութեան և կոլտնտեսութեան
մեջ:

Նորմաների հանձնմանը պատրաստվելու համար դրվածների

մեջ առաջինները պետք է լինեն կոմիտեյի անդամները, ցեխա-
յին կազմակերպչները, ակտիվիստները, հարվածային հասարա-
կական աշխատողները, վորպեսզի նորմաների հանձնումն ամբար-
տեղուց հետո, նրանք կարողանան ել արիւն լայլ կազմակերպեն
Կարմիր Սաչի հասարակական աշխատանքը: «ՊԱՍՊ» կրծքանչան-
չանակիրները սանիտարական պաշտպանութեան հարվածայիններն
են, առաջատար մարդիկ, ամենից շատ զիտակից բանվորներն ու
բանվորուհիները, կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիներն են:

«ՊԱՍՊ» կրծքանչանի նորմաները՝ ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի և
ԽՍՀՄ պաշտպանական կազմակերպութեանները կողմից հաստա-
րարած ռադմա-տեխնիկական ընտելութեան մի մասն է կազմում:
ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշման համաձայն, յուրաքանչյուր ադ-
ջիկ-կոմյերիտուհի պարտադիր կարողով պետք է հանձնի
«ՊԱՍՊ» նորմաները: Այդ ռադմա-տեխնիկական ընտելութեան
անցկացնելու համար ստեղծված են տեղական շտաբներ ԼԿՅԵՄ
կոմիտեյի առաջին քարտուղարի նախադահլութեամբ և բոլոր
պաշտպանական կազմակերպութեանները (Կարմիր Սաչ, Պաշա-
վարքիմ, ՅԿԳԽ) ղեկավարները մասնակցութեամբ:

Պետք է դործնարար կոնտակտ և համագործակցութեան
հաստատել Կոմյերիտութեան կոմիտեները և պաշտպանական
կազմակերպութեանները հետ, առաջին հերթին բոլոր ադջիկ-
կոմյերիտուհիներին «ՊԱՍՊ» նորմաների հանձնմանը ներգրավե-
լու համար: Հենց նրանցից ել պետք է հարկադրել Կարմիր Սա-
չի ակտիվիստները նոր կադրերը:

Անհրաժեշտ է, վոր նորմաների հանձնմանը պատրաստվելու
պրոցեսում ապագա ակտիվիստները ներգրավվեն Կարմիր Սաչի
(Կարմիր Մահիկի) ընկերութեան անդամութեան և Կարմիր Սաչի
դործնական աշխատանքի մեջ:

Կրծքանչանակիրները պետք է սանիտարական պաշտպանու-
թեան հարվածայիններ կոմիտե: Նրանք պետք է կազմեն Կարմիր
Սաչի սանիտարական պոստերի և բրիգադների կմախքը, նրան-
ցից պետք է առաջին հերթին ընտրել ցեխային կազմակերպչներ-
ըն և կոմիտեները անդամներին:

«ՊԱՍՊ»-ի նշանակութեանն է՝ բարձրացնել բանվորական
մասսայի, մասնավոր յերիտասարդութեան ընդհանուր կուլտու-
րական մակարդակը և աշխատանքային հասարակական կարգա-
պահութեանը: Կրծքանչանակիրները հետ տարվելիք աշխատան-

քը պետք է ախպես դնել, վոր «ՊԱՍՊ»-ի յուրաքանչյուր կըրծ-
քանչանակիր հասկանա, վոր ինքը միշտ պետք է լինի հասակ
ու մաքուր հաղելած, վոր նա պետք է կուլտուրական, գիտա-
կից վերաբերմունքի որինակ ցույց տա դեպի սոցիալիստական
տեփականությունը, արտադրությունը, աշխատանքային և հա-
սարակական կարգապահությունը:

«ՊԱՍՊ» խմբակները կազմակերպության տեխնիկան բարդ-
չե, պետք է միայն սերտորեն կապակցել աշխատանքը կոմյերի-
տական կազմակերպության և յերիտասարդության ռազմա-
տեխնիկական քննության շտաբի հետ:

Ամենակարևոր և ամենապատասխանատուն խմբակի լայ-
զեկավարի ընտրությունն է:

Խմբակի ղեկավարը, վորպես կանոն, պետք է բժիշկ լինի:
Ցանկալի յե ընտրել հարվածային բժիշկ հասարակական աշխա-
տողներին, կարմիր Սաչում աշխատող բժիշկներին: Այդ հար-
ցը պետք է նախապես քննության առնել Բժշկա-սանիտարական
արհեստակցական միության կազմակերպության նախադահլի
հետ: Բժիշկներին պետք է աշխատանքի ներդրավել հասարակա-
կան բեռնալորման կարգով, հենվելով Բժշկասանիտարական
միության կենտկոմի վորոշման վրա, վորը պարտավորեցնում է
յուրաքանչյուր բժշկի պատրաստել առնվազն «ՊԱՍՊ»-ի 20
կրծքանչանակիրներ: Այդ նույն քանակության կրծքանչանակիր-
ներ պետք է պատրաստի նաև այն բժիշկը, վորը ցանկանում է
ինքը քննություն տալ բժիշկների «ՊԱՍՊ» կրծքանչանի համար
սահմանված հատուկ նորմաներով:

Վատ ղեկավարը դեպի գործն իր ունեցած անբարեխիղճ վե-
րաբերմունքով, իր վատ պատրաստությամբ, պարապմունքներին
ուշանալով կարող է քայքայել «ՊԱՍՊ»-ի կազմակերպված խմ-
բակը:

«ՊԱՍՊ» խմբակների աշխատանքի վործը ցույց է տալիս,
վոր դեպի իրենց հասարակական պարտականությունները լրջո-
բեն վերաբերվող «ՊԱՍՊ» խմբակների բժիշկ-ղեկավարները վոչ
միայն անց են կացնում պարապմունքները սահմանված որերին
ու ժամերին, այլ և եքսկուրսիաներ են կազմակերպում, նախա-
պատրաստում են բոլոր անհրաժեշտ իրերը գործնական պա-
րապմունքների համար, կազմակերպում են թույլերին կամ յետ
մնացողներին ոգնություն ցույց տալու գործը: Խմբակի որինա-

կելի ղեկավար է հանդիսանում, որինակ, բժիշկ Իվանովը, վո-
րը յերկար տարիներ աշխատում է կարմիր Սաչի Որլովի կազ-
մակերպության մեջ: Նա ակտիվ հասարակական աշխատող լինե-
լով, հաճախում էր պարապմունքները բաց թողած խմբակի ան-
դամների մոտ նրանց աշխատանքի վայրերում, պարզում էր
պարապմունքին հաճախելու պատճառները, զրուցում էր նը-
բանց հետ և հասնում էր այն նպատակին, վոր «ՊԱՍՊ» խմ-
բակները բոլոր զբվածները 100 %-ով հաճախում էին պարապ-
մունքները և հանձնում էին «ՊԱՍՊ» նորմաները:

Որինակելի աշխատանքի համար կարմիր Սաչի Որլովի կո-
միտեն բժիշկ Իվանովին պարզեատրել է Ղրիմի սանատորիայի
ուղեգրով: Այդպիսի բժիշկներ, ինչպիսին է բժիշկ Իվանովը,
քիչ չեն յուրաքանչյուր քաղաքում, շրջանում: Պետք է վոր
կոմիտեն հմտորեն ներգրավի նրանց հասարակական աշխատան-
քի, «ՊԱՍՊ»-ի նորմաները հանձնել ցանկացող բանլորներին ու
կուլտուրեստականներին սովորեցնելու գործին:

Բժիշկներ չլինելու դեպքում, մանավանդ գյուղում, թույ-
լատրվում է, վորպես պարապմունքների ղեկավարներ ներգրա-
վել նաև բժշկական միջին կազմը (բուժակներին, քույրերին),
բայց միայն այն ժամանակ, յերբ նրանք իրենք կհանձնեն
«ՊԱՍՊ» II աստիճանի կրծքանչանի նորմաները «գերազանց» գը-
նահատականով:

Ղեկավարի ընտրությունից հետո, պայմանավորվելով կոմ-
յերիտական կազմակերպության և պրոֆմիության տեղական կո-
միտեյի հետ, շենք է հատկացվում խմբակի պարապմունքներն
անցկացնելու համար, կազմվում է դասացուցակ և ստեղծվում
են ուսումնական և գիտողական պիտույքները:

Խմբակի անդամներից մեկն ալազ է նշանակվում, վորի վը-
րա դրվում է հաճախումների հաշվառումը, յուրաքանչյուր պա-
րապմունքի նախապատրաստական աշխատանքը, խմբակի ան-
դամներին առաջիկա պարապմունքների մասին հայտնելը, գրա-
կանության, գիտողական պիտույքների և պրակտաների ղնումնե-
րը:

Յուրաքանչյուր պարապմունք պետք է անցկացնել վոչ թե
գասախոսության ձևով, այլ զրույցի և ցուցադրումների ձևով,
գործնական պարապմունքների ձևով, ունկնդիրներին ակտիվո-
րեն ներգրավելով պարապմունքների նյութի մշակմանը: Հատ-

կապես կարևոր է դործնականորեն յուրացնել տալը՝ վնասվածներին պատգարակներով փոխադրութեան տեխնիկան, լավ գլխենալ հակադադր և կարողանալ հագնել այն 5 վայրկյանում:

Խմբակի ղեկավարը պետք է հաշվի առնի իր ունկնդիրների պատրաստակաճութունը և դրան համապատասխան կառուցի պարապմունքները: «ՊԱՍՊ» I աստիճանի կրծքանշանի նորմաները հանձնելու պատրաստութեան համար 60 ժամ: Վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ ծրագրի կրճատում և նորմաների հանձնման ժամանակ դիջողություններ անելը: Պետք է հիշել, չոր անբարեխիղճ պատրաստությունը և վոչ լիարժեք կրծքանշանակիրներ բաց թողնելը հանցանք է մեր հայրենիքի հանդեպ: «ՊԱՍՊ» II աստիճանի կրծքանշանի նորմաների համար պատրաստությունը և նորմաների հանձնումը հետևյալ աստիճանն է աշխատավորների ռազմա-սանիտարական պատրաստութեան դործում: «ՊԱՍՊ» I աստիճանի նորմաները հանձնածները պետք է ներդրալվեն հետագա ուսուցմանը, նպատակ ունենալով բարձրացնելու իրենց վերակազմումը «ՊԱՍՊ» II աստիճանի կրծքանշանի նորմաների հանձնման պատրաստվելու և նորմաները հանձնելու միջոցով:

«ՊԱՍՊ» II աստիճանի նորմաները թեև միանգամայն մատչելի յեն բանվորական մասսայի համար, սակայն շատ ալելի յուրջ և յերկարատև պատրաստություն են պահանջում: «ՊԱՍՊ» II աստիճանի նորմաները նաև ալելի վերակազմված ղեկավարներ են պահանջում:

Փորձված դասատուներ յեղած ղեպքում, պատրաստութեան կազմակերպումը և «ՊԱՍՊ» II աստիճանի կրծքանշանի նորմաների հանձնումը միանգամայն իրադրոճելի խնդիր է ամեն մի խոշոր ձեռնարկութեան մեջ:

«ՊԱՍՊ» II աստիճանի խմբակները, նկատի ունենալով պատրաստութեան լրջությունը, պետք է կազմակերպել Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) շրջանային կոմիտեներին անմիջական մասնակցութեամբ, վերոնց վրա պարտականություն է դրվում վերակազմի ղեկավար կազմեր նշանակել, ապահովել դրականութեամբ, դիտողական պիտույքներով, մասնակցել նորմաներն ընդունելու և «ՊԱՍՊ» կրծքանշան տալու դործին: Շրջանային կոմիտեների աշխատողներն իրենք պետք է ներդրալվեն նորմաների հանձնմանը և հանձնեն այդ նորմաները: «ՊԱՍՊ» II աստի-

ճանի կրծքանշանի նորմաներին պատրաստվելու համար առաջին հերթին պետք է ներդրալվել կոմիտեիտուհիներին:

Պարապմունքներն անցնելուց հետո, «ՊԱՍՊ»-ի թե՛ I աստիճանի և թե՛ II աստիճանի խմբակներում գիտելիքների յուրացման ստուգում է կատարվում:

Նորմաները հանձնողները պետք է կարողանան ինքնուրույն կերպով պատասխանել ցուցակի բոլոր հարցերին և ճշտորեն կատարեն նորմաներով պահանջվող բոլոր դործնական աշխատանքները: Հանձնարարվում է մեկ որպա ընթացքում նորմաներն ընդունել միմիայն մեկ կոմպլեքսով:

Նորմաներն ընդունելու համար նշանակվում է հանձնաժողով հետևյալ կազմով՝ Կարմիր Սաչի կոմիտեյի նախագահ, խմբակի ղեկավար-բժիշկ և տվյալ ձեռնարկութեան, խորհտեսութեան կամ կոլտեսութեան կոմիտեիտական ու պրոֆմիտեիտական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Նորմաների ընդունման դործի կազմակերպումը պետք է խնամքով նախապատրաստված լինի. ցանկալի յե այդ անցկացնել բանվորական և կոլտեսային մասսաների մասնակցութեամբ բանվորական ակումբներում, ամսոն ամսոային աչքիներում, կուլտուրայի և հանգստի պարկերում: Հենց այստեղ էլ կարելի յե անցկացնել «ՊԱՍՊ» նոր խմբակների մեջ հավաքազբյւր: Յուրաքանչյուրին պետք է անպայման անհատորեն հարցնել: Խմբական պատասխաններն արգելվում են:

«ՊԱՍՊ» կրծքանշան հատկացնելու ժամանակ պետք է հաշվի առնել հանձնողի ակտիվությունն իր ձեռնարկութեան, խորհտեսութեան, ՄՏ կայանի, կոլտեսութեան, Կարմիր Սաչի սկզբնական կազմակերպութեան մեջ:

Կոմիտեյի հմուտ աշխատանքից է կախված այս նորմայի կատարումը. կոմիտեն պետք է խոշոր նախապատրաստական աշխատանք կատարի, նչի հասարակական աշխատանքի վերաբերյալ առաջադրությունները, կազմակերպի այդ առաջադրությունների ստուգումը, մասսայական աշխատանք ծալալի «ՊԱՍՊ» կրծքանշանակիրներից պատրաստելու խակական ակտիվիտետներ — սանիտարական աշխատանքի հարվածայիններ:

Նորմաների հանձնման ձևակերպումը կատարվում է հաշվառման քարտերով, վերոնք լրացվում են նորմաները հանձնելու յուրաքանչյուր ցանկացողի համար՝ դեռ «ՊԱՍՊ»-ի խմբակը մտնելու ժամանակ: Յուրաքանչյուր կոմպլեքսից հանձնողը

պետք է պատշաճ զննահատական ստանա, վորը նշանակվում է նրա հաշվառման քարտում «ՊԱՍՊ» նորմաներն ընդունողի ստորագրութեամբ:

Խմբակի ղեկավարն ու ավագը, նորմաների ընդունումը վերջացնելուց հետո, ներկայացնում են հաշվառման քարտերն ու նորմաներն ընդունելու արձանագրութեւոյնը Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) շրջանային կոմիտեյին, և վորտեղից ել ըստանում են «ՊԱՍՊ» կրճ. քանչանները: Կրճ. քանչանների արժեքը վճարում է պրոֆմիտութեւոյնը, կամ սոյլալ ձեռնարկութեան վարչութեւոյնը, իսկ ծայրահեղ դեպքում նորմաները հանձնողները:

«ՊԱՍՊ» կրճ. քանչանների և այդպիսիները կրելու իրավունք սովող վկայականների հանձնումը ցանկալի յե հարմարեցնել և կատարել հանդիսավոր որերին, որինակ, մայիսի 1-ին, նոյեմբերի 7-ին, փետրվարի 23-ին, մարտի 8-ին և քանի որական լայն ժողովներում, բացատրելով «ՊԱՍՊ»-ի համար բոլոր աշխատավորներին մասսայական պատրաստութեան կարևորութեւոյնը, թույլ տալով «ՊԱՍՊ» լավագույն կրճ. քանչանակիրներին յերույթները, վորոնք ռապորտ կտան իրենց ուսուցման մասին, և պարզեատրել այն կրճ. քանչանակիրներին, վորոնք նորմաները հանձնելու ժամանակ դերագանց զննահատական են ստացել:

Այդպիսի հանդիսավոր ավարտումների ժամանակ անհրաժեշտ է լայնորեն բացատրել Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) նշանակութեւոյնը, վորպէս մասսայական-սանիտարական պաշտպանութեան կազմակերպութեան, ընկերութեան մեջ ներդրավել նոր անդամներ, նոր ակտիվիստներ հավաքադրել, ամրացնել հասարակական աշխատանքում իրենց ցուցաբերած ակտիվիստներին, պարզեատրելով և ամեն կերպ խրախուսելով նրանց:

«ՊԱՍՊ» կրճ. քանչանակիր լինել — յուրաքանչյուր կոմյերիտուհու և կոմյերիտականի, յերիտասարդ բանվորների և կոլտնտեսուհիների պատվի գործն է: Կրճ. քանչանակիրներին հսկայական բանակի առկայութեւոյնը, կրճ. քանչանակիրներ, վորոնք պատրաստված են 1934 թվին կես միլիոն մարդուց ավելի քանակութեամբ, վրկայում են՝ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի կադրերի պատրաստութեան աշխատանքի այդ նոր տեսակի հսկայական հաջողութեան մասին: Անհրաժեշտ է հմտորեն ներդրավել կրճ. քանչանակիրներին մասսան՝ սանիտարական պաշտպանութեան ամրա-

պնդման, իրենց ձեռնարկութեան, կոլտնտեսութեան, խորհտնտեսութեան մաքրութեան համար տարվող պայքարի ամենորջա գործնական աշխատանքի մեջ: «ՊԱՍՊ»-ի վրչ. մի կրճ. քանչանակիր Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպութեան ուղարկութեւոյնից դուրս չպիտի լինի:

Խմբակներն ու կուրսերն ավարտողներից համարվում են սանիտարական պոստերը, վորոնց միացնելով, սանիտարական ջոկեր են կազմում (3-ական ողակից) և վերջապէս սանիտարական դրուժինաներ (3-ական ջոկից): Դրուժինայի գլուխն է կանգնած պետը, քաղղեկը և տնտեսվարը:

Սանիտարական դրուժինաները՝ Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) չափազանց կարևոր, մշտական, ռազմականացված կազմակերպութեւոյններ են, վորոնք խաղաղ ժամանակ կատարում են Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեների՝ առողջացման և պաշտպանութեան բնույթ կրող ամեն տեսակի առաջադրութեւոյնները և ամեն որ աշխատում են իրենց սանիտարական պոստերում: Իսկ պատերազմի ժամանակ սանդրուժինաները Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեների շատ արժեքավոր ուղերատիվ ռեզերվը կլինեն՝ ոչնչութեւոյն հասցնելու սանիտարական դրնացները բեռնաթափելու և բեռնելու ժամանակ, հիվանդանոցներ սարքելու, դորամասերը և դաղթականների խմբերը տեղավորելու, մանավանդ հակողային պաշտպանութեան ժամանակ:

Այդ պտճառով սանիտարական դրուժինաների հետ պետք է կանոնավոր կերպով, ամիսը 2 անգամ պարապմունքներ անցկացնել հատուկ ծրագրով: Այդ պարապմունքները պետք է միմիայն գործնականորեն կառուցել հետաքրքիր նյութի վերաբերյալ, դրուժինաների անդամներին դեպի իրենց դրավելով և նրանցից կոմիտեով ամուր միախորումներ: Անհրաժեշտ է նախատեսել կապի սխեման տաղնապային դեպքի համար, վորպէսզի դրուժինան կարողանա հավաքվել ամենակարճ ժամանակամիջոցում: Այդ իրականացվում է այսպէս կոչված «չլթայով կապի» միջոցով, յերբ նախապէս պլան է մշակված, վորը պարտավորեցնում է դրուժինայի յուրաքանչյուր անդամին, տաղնապի ազդանշան ըստանալուց անմիջապէս հետո, այդ մասին հայտնել յերկու վորոշ դրուժինիկներին և միայն դրանից հետո դնալ հավաքակալան: Սանիտարական դրուժինան պետք է զգեստավորված լինի սահմանված տարազի հագուստով և գործիքներ ունենա տաբելի

(տախտակի) համաձայն (պատգարակներ (նասիրվա), պայուսակներ, հակազգեր, ջրամաններ) :

Մանդրուսթիանների խնդիրներին հատուկ կարևորությունը մեծ ուշադրություն և պահանջում դեպի այդ դրուսթիանները կարմիր թաշի կոմիտեների կողմից :

Կազմերը պետք է պատրաստել լրացառապես կարմիր թաշի և կարմիր Մահիկի ընկերությունների գործադիր կոմիտեյի ծրագրերով, թույլ չտալով տեղական կոմիտեներին այդ ծրագրերը կրճատելու, լրացնելու ու փոփոխելու :

Յուրաքանչյուր կուրսի համար դրուսթյուն ունեն հատկապես մշակած վորոշ ծրագրեր, վորոնց մեջ մատնանշված են ուսումնական ժամերի քանակը, մեթոդական ցուցումները, վոր մշակված ու հրատարակված են կարմիր թաշի և կարմիր Մահիկի ընկերությունների միություն գործկոմի կողմից :

Գոյություն ունեցող ծրագրերը վոչ մի դեպքում չի կարելի փոփոխել, այլ պետք է խստորեն կյանքում կիրառել այդ ծրագրերը : Պետք է մատնանշել, վոր մի քանի տեղերում, դրժբախտաբար, փորձեր են յեղել «վերամշակելու» դրուսթյուն ունեցող ծրագրերը :

Կարմիր թաշի և կարմիր Մահիկի սխտեմում պատրաստվող կազմերի մյուս կարևորագույն տեսակը հանդիսանում են բժշկական քուլյերը : Միաժամանակ հատուկ պատասխանատվություն է դրվում դրանց վրա նաև այն պատճառով, վոր դպրոցները համարվում են կամավոր կարգով, բայց բոլոր ավարտողները պարտավոր են դիմվորական հաշվատման յեմբարկվել շրջանային Ռադմական կոմիտարիատում : Այսպիսով դպրոցի ընդունող հանձնաժողովը վորոշ չափով դորակոչային հանձնաժողովի պատասխանատու դեր է խաղում :

Բժշկական քուլյերի դպրոցն ընդունվում են սոցիալապես ստուգված կանայք ու աղջիկներ 18 տարեկանից վոչ ցածր և 30 տարեկանից վոչ բարձր, վորոնք ունեն յոթնամյա ծավալով կրթություն և իրենց առողջության վիճակով համապատասխանում են ՍՍՀՄ ՀՌԽ № 111 հրամանի պահանջներին :

Ունկնդիրներին կազմի կանոնավոր ընտրությունը վորոշում է կուրսերի հաջողությունը : Գործի վատ դրվածքի որինակ կարող են ծառայել կայինինո քաղաքի բժշկական քուլյերի կուրսերը՝ 1934 թ. ընթացքում : Այստեղ, ունկնդիրների պատահական

կազմի շնորհիվ, վորոնք հավաքված են յեղել, ինչպես ասում են, «այստեղից այնտեղից», լրադրային հայտարարություն համաձայն, կուրսերն ընդունված 55 ունկնդիրներից, ուսումնական տարվա վերջին մնացել են միայն 12 հոգի : Այդ տեղի յե ունեցել կուրսերի ունկնդիրների անվույթ ընտրություն, շտապողականություն և այդ հարցին անուշադիր վերաբերվելու հետևանքով :

Բժշկական քուլյերի կուրսերն ընդունված այդպիսի ունկնդրուհիները, մեկ յերկու տասնորյակ պարապելուց հետո, հեռանում են կուրսերից :

Այլ կերպ է ընթանում գործն այն դեպքերում, յերբ կարմիր թաշի կոմիտեն լրջորեն է վերաբերվում այդ հարցին, որինակ՝ Լենինգրադում Պրոլետարսկի գործարանում՝ բժշկական քուլյերի կուրսերը համարված են յեղել յերխոտասարդ բանվորուհիներով, առավելապես կոմյերխոուհիներով, 30 ունկնդրուհիներից՝ սոցիալական կազմը յեղել է հետևյալը՝

Գործարանի բանվորուհիներ	24 հոգի
Գործարանի առողջապահական միավորման բանվորուհիներ	4 հոգի
Բանվորներին կանայք	2 հոգի

Ինչպես յերևում է, սոցիալական կազմը միատեսակ է, կուրսերը համարվել են գործարկոմի անմիջական մասնակցությամբ, վորն իր ցեխային կոմիտեների միջոցով կուրսերի համար բանվորուհիներ է ընտրել պրոֆակտիվից, լավագույն արտադրողներից և հարվածայիններից :

Ինչպես^o է այդ կուրսերում հաճախման դրուսթյունը : Մինչև հետադրոտման մոմենտն այդ կուրսերում վոչ մի ուշացում և վոչ մի ձախողում չի յեղել : Իսկ կուրսերն աշխատել են 8 ամիս և ունկնդիրների կազմն արդեն վորոշվել է :

Ներկայումս կարմիր թաշի վերակառուցել է բժշկական քուլյերի պատրաստության սխտեմը : Նրանց պատրաստման համար պետք է բացվեն յերկամյա նորմալ (ցերեկային) կամ յեռամյա (գիշերային) դպրոցներ :

Պոչոր նշանակություն է ունեցել նաև կուրսերի աշխատանք

քի հաստատ և պարզորոշ ղեկավարութիւնը, վոր ցուցարեքել և դարոցի պետը:

Դարոցի ղեկավար պետը և ընտրել այն բժշկներին, վորոնք աշխատում են Փարբիկայի, գործարանի, թաղամասի հիվանդանոցում կամ բուժարանում: Պարապմունքները պետք և անցկացնել մաքուր, լուսավոր և ընդարձակ սենյակում, վորպեսզի բոլոր ունկնդիրները կարողանան նստել և հնարավորութիւն ունենան վերնադաստը հանել:

Դարոցը պետք և լիովին ապահովված լինի դիտողական պիտուկներով և դասադրքերով: Հատկապես կարևոր և դարոցն ամբացնել հենց առաջին ուրից ամենամոտիկ բուժհիմնարկին աջատեղ մշտապես գործնական պարապմունքներ անցկացնելու համար: Նկատի ունենալով, վոր ունկնդիրները սովորաբար անմիջապես աշխատանքից են դարոց դալիս, կոմիտեները նրանց համար պետք և կազմակերպեն բուժֆետ, տաք թեյ:

Դարոցում կանոնավոր անցկացվող սոցիալիստական մրցակցութիւնը հիանալի արդյունքներ և տալիս: Լավագույն առաջատար ունկնդիրներն իրենց սոցալամասագրերի համաձայն ողնոս ևն հետ մնացողներին, վորպեսզի նրանք առաջատարներին հասնեն:

Կուրսանտուհիներից իսկապես կարմիր քույրեր, հասարակական աշխատողներ, թորհրդային Միութիւն սանիտարական պաշտպանութիւն հարվածայիններ պատրաստելու համար, կուրսանտուհիներին պետք և ներդրալել կարմիր թաղի գործնական աշխատանքին, պետք և նրանց սովորեցնել բժշկական գործի տեխնիկական միաժամանակ նաև կարմիր թաղի մասսայական աշխատանքի տեխնիկական: Մեր քույրերը պետք և հանդիսանան բաժանադիչներ պիտի վերցնեն:

Խոշոր հետաքրքրութիւն և ներկայացնում այն հասարակական աշխատանքը, վոր անց են կացրել բժշկական քույրերի կուրսերի ունկնդիրները Նովգորոգում:

Սոցմրցակցութիւն պայմանագրեր են կնքված բոլոր ունկնդրուհիներին միջև: Դարոցները կատարել են հետևյալ պարտադրուհիները՝ 1) շարաթորակ և կազմակերպվել բոլոր ունկնդրուհիներին մասնակցութիւնով, միջոցներ են հատկացվել հարկային պաշտպանութիւն (ՀՈՊ) ֆոնդին՝ ճամբարային հարկային պաշտպանութիւն:

վաքի համար, 2) դրամական միջոցներ են հալածել իրենց մեջ, ընդգրկելով նաև դաստուռական կազմը, ընկ. կիրովի անվան եսկադրիլիայի համար, 3) արտադրութիւնն ՌԿՍԸ սկզբնական եսկադրիլիայի համար, 3) արտադրութիւնն ստուգում և կատարվել, կարմիր թաղի կազմակերպութիւններին ստուգում և կատարվել, կարմիր թաղի անդամներին վերահաշվառում և անցկացվել, և բոլոր կուրսանտուհիներն ամբացվել են կարմիր թաղի աշխատանքի վորոշ քնադատանքներին:

Կարմիր թաղի բժշկական քույրերի դարոցները, վորոնք բաղկացած են բանվորուհիներից, կոմյերիտուհիներից և բանվորներին կանանցից, անպայման գործարանի, կուրսանտուհիների ղեկավար կազմակերպութիւններին տեսողութիւն դաշտում պիտի լինեն:

Չափազանց արժեքավոր և այն կոմիտեներին վորձը, վորոնք պարբերաբար ստուգում են դարոցի աշխատանքը կուրսակցական, արհեստակցական կազմակերպութիւններին ակտիվից կազմաված հասարակական բրիգադներին միջոցով:

Այդպիսի բրիգադ կազմակերպված և յեղել Ագրիզ քաղաքում, բրիգադը խնամքով ստուգել և կուրսերի աշխատանքը և շատ բովանդակալից հետևութիւններ և ներկայացրել: Ահա թե ինչ և հայտնաբերել բրիգադը:

«Կուրսերը դաստուռական կազմով ապահովված են 100 տոկոսով: Փետրվար ամսվա ընթացքում պարապմունքներին ճախողում չի յեղել: Կուրսանտուհիներին հաճախելութիւնը լավ է: Առանց հարգելի պատճաններին բացակայութիւններ չեն յեղել:

Դիտողական պիտուկներին կուրսերն ունեն աղյուսակներ, մողէլներ, մուլյաթներ, եպիդիասկոպ, կմախք: Կուրսանտուհիներն ապահովված են դասադրքերով այն հաշվով, վոր 3 մարդու մեկ դասադրք հասնի, գրենական պիտուկներով կուրսանտուհիներն ապահովված են:

Արտադրական պրակտիկայի համար լայնորեն ոգտագործվում և հիվանդանոցը, վորտեղ լավ են դրված հետևյալ բաժանմունքները՝ վերաբուժական, ներքին հիվանդութիւններին, կանանց հիվանդութիւններին, ունկնդրի բաժանմունքները, լաբորատորիան և այլն:

Այս տարի հատուկ ուշադրութիւն և դարձված հասարակապիտութիւնը:

Կուրսանտները կատարում են հետևյալ հասարակական աշխատանքները՝ հիվանդ նախադիտակողիկներին շեփուկություն (ներանց կենցաղային պայմաններին հետազոտություն), մարտի 8-ին 100 տան տնտեսուհիներ են հավաքագրել ՌԿՍԸ անդամ, պատի թերթ են հրատարակել, անց են կացրել միասնական սանիտարական ուր և սկսել են սոցիալաբանագրեր կնքելը»:

Հանձնարարելով հասարակական ստուգատեսի և Կարմիր Սաչի ամենօրյա դործնական հասարակական աշխատանքի մեջ ունեղնություններին ներգրավելու մեթոդը, մեր բոլոր կազմակերպություններին առաջ մենք խնդիր ենք դնում — ավելի մեծ ուշադրություն նվիրել իրենց դպրոցներին, ավելի մոտիկ կանգնել այդ դպրոցների կյանքին, և ժամանակին վերացնել այն բոլոր թերուկությունները, վորոնք դոյություն ունեն բժշկական դպրոցի աշխատանքում:

Դպրոցն ավարտելուց հետո պետք է ոգտագործել մեր պատրաստած կազմերը: Կարմիր Սաչի կազմերին վոչ ճիշտ ոգտագործման ուղղակի հետևանքը լինում է այն, վոր հաճախ իրենց մոտ ախտիվ չեն ունենում այն կոմիտեները, վորոնք մի շարք տարիների ընթացքում գրադվել են կազմերի պատրաստությունամբ, թույրերի դպրոց ունեն, բայց հարկ չեղած բուպեյին չեն կարողանում վոչ մի ախտիվիստ դտնել:

Կազմերի կանոնավոր ոգտագործումը պակաս պատասխանատու դործ չէ, քան նրանց պատրաստությունը:

Կարմիր Սաչի կուրսերում պատրաստած կազմերի ոգտագործման համար անհրաժեշտ է, վոր կոմիտեյի աշխատանքի վողջ պլանը լրիվ համապատասխանի կազմերի պատրաստման պլանին:

«ՊՍՍՊ» կրծքանշանի նորմաները հանձնողներին պետք է լրովին ոգտագործել աշխատանքի ընթացքում, վորպես սանպատերի պետեր, ոգտակավարներ իրենց աշխատանքի վայրերում: Նրանք պետք է ստանան աշխատանքի վորոչ բնադավառ ու հրահանգավորում և սանպատի աշխատանքն սկսեն ցելում, ճաշարանում, իրենց շուրջը համախմբելով իրենց ձեռնարկություն բանվորների ախտիվը:

Բացի պատրաստման վերոհիշյալ տեսակներից, Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկը) պատրաստում է նաև ղինապարտներ

(բժիշկներին, սանհրահանգիչներ — արտագորայիններին) կազմեր հատուկ ցուցումների համաձայն:

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) յուրաքանչյուր կոմիտե կազմերի պատրաստման համար պետք է ունենա մշտական, լուկավոր, տաքացվող և կահավորված շենք, վորտեղ պետք է կազմակերպել ռադմա-սանիտարական վարժակայան (ՌՍՎԿ): Այդ վարժակայանում ըստ հնարավորին պետք է կենտրոնացնել կազմերի պատրաստման բոլոր տեսակները, վորը մեծ հարմարություններ կտա կուրսերի ղեկավարման և նրան ձեռնարկներով մատակարարելու համար:

Կարմիր Սաչը (Կարմիր Մահիկը) կազմերի ռադմա-սանիտարական պատրաստություն ընդհանուր աշխատանքի ընթացքում համապատասխան տեղ է հատկացվում բնակվարձկոպներում տարվելիք աշխատանքին և տան տնտեսուհիներից կրծքանշանակիրներին պատրաստմանը: Փորձը ցույց է տալիս, վոր «անկամակերպ բնակչություն» այդ խմբակից դուրս են գալիս սանիտարական պաշտպանություն հիանալի ախտիվիստներ, հավաճայիններ, վորոնք մասսաների մեջ սանիտարական կուլտուրա չեն մտցնում և վորոնք խոշոր ուժ են հանդիսանում հակողային պաշտպանություն համար:

Կազմերի պատրաստումը Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) աշխատանքի ամենակարևոր բնագավառն է, և կազմերի պատրաստման հարցը վողջ կոմիտեյի, վողջ ախտիվի գործն է: Կազմերի պատրաստման և ոգտագործման գործում խիստ պլանայնությունը և լայն հասարակական ուշադրությունը դեպի այդ հարցերը կապահովեն կազմերի պատրաստման գործի հաջողությունը:

ՊԱՅԲԱՐ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

Մեր յերկրում կուսակցությունն ու կառավարությունը հրահայական ուշադրություն են դարձնում աշխատավորությունն ուղղության հողատարություն վրա:

Առողջապահություն մասին Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ կենտկոմի հատուկ վորոշումներով խոշոր գումարներ են հատկացված առողջապահություն գործի հետագա բարելավման համար:

Համկ(բ)Կ Կենտրոնը և ԹԿԽ 1935 թ. մարտի 4-ի դեկրետով խոշոր չափով ավելացվել են բժշկական աշխատողների աշխատավարձը, վորն ապահովում է Խորհրդային Միության բժշկական բժշկական ողնուլթյան վորակի լրակատար աճումը:

Կոմիտեակցուլթյան և բանվորա-դյուղացիական կառավարուլթյան բուլչեիկյան հոգատարուլթյունը, վոր ԽՍՀՄ դառնա աշխարհիս ամենաառողջ և յերջանիկ յերկիրը, պահանջում է բանվորական և կոլտնտեսային հասարակայնուլթյան կողմից ակտիվուլթյան ել ավելի մեծ աճում՝ մարքուլթյան համար, արտադրական շենքերի, հանրակացարանների, ճաշարանների, դպրոցների, ախումբների, դործարանային բակերի, կոլտնտեսուլթյուններում յեղած ջրհորների և այլն սանիտարական առողջացման համար պայքար մղելու դործում:

Հարկավոր է բացատրական աշխատանք, վորն ողնում է բանվորական ու կոլտնտեսային մասսաներին յուրացնելու անձնական և հասարակական առողջապահուլթյան կանոնները պահպանելու կարևորուլթյունը, հարկավոր է ցեխերի, հանրակացարանների, ճաշարանների, բանվորական ավանների, դպրոցների, կոլտնտեսային խրճիթների և այլ սանիտարական վիճակի հասարակական վերահսկողուլթյուն:

Մարքուլթյան համար մղվող պայքարի ընթացքում Կարմիր Խաչի կազմակերպուլթյունների կողմից մշակված են առողջապահական մասսայական աշխատանքի այնպիսի հաջող ձևեր, վորոնք հիանալի արդյունքներ են տալիս: Առաջին հերթին դրանց պատկանում են Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) հասարակական սանիտարական պոստերը:

Սանիտարական պոստերը բաղկացած են բանվորական և կոլտնտեսային հասարակայնուլթյան ներկայացուցիչներից, վորոնց հանձնված է իրենց դործարանի, Փարբրիկայի, կոլտնտեսուլթյան բանվորների և կոլտնտեսականների առողջուլթյան համար հասարակական հոգատարուլթյունը:

«ՊԱՊ» կրծքանշանի նորմաները հանձնածներից, այսինքն այն անձնավորուլթյուններից, վորոնք արդեն անհրաժեշտ սանիտարական պատրաստուլթյուն ունեն, կազմակերպվում են 4 ողակավորներից բաղկացած սանիտարական պոստեր, իսկ դյուղում, վորտեղ բավական քանակուլթյամբ կրծքանշանակիրներ չկան,

սանպոստերը կազմակերպվում են այն անձնավորուլթյուններից, վորոնք անցել են ուղղա-սանիտարական գիտելիքների կամակր: Այդ 4 ողակավորներից ընտրում են ամենասկտիվ և վործված ընկերոջ, վորը և նշանակվում է տվյալ ցեխի, ճաշարանի կամ հանրակացարանի սանպոստի պետ: Գյուղում սանպոստի պետերը պատրաստվում են սանպոստերի պետերի կուրսերում:

Իր աշխատանքի համար սանիտարական պոստը ներգրավում է Կարմիր Խաչի ակտիվը և անդամներին:

Սանպոստի խնդիրները տարբեր են, նայած նրան, թե նա վորտեղ պիտի անցկացնի իր աշխատանքը: Անհրաժեշտ է, վոր սանպոստի ողակավորները գիտենան, թե մանավանդ սանիտարական վիճակի վոր հարցերի վրա պետք է անմիջապես և հատուկ ուշադրուլթյուն դարձնել, թե ինչի համար և անմիջապես պետք է պայքար մղի սանպոստը ձեռնարկուլթյան մեջ, ցեխում, կոլտնտեսային բրիգադում, կուլտ-կենցաղային հիմնարկներում:

Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպուլթյունների կոմիտեները հավաքում են սանպոստերի պետերին և ողակավորներին, հրավիրում են նրանց կոմիտեյի լայնացրած նիստերին ու մանրամասն հրահանգավորում են, թե ինչպես պիտի աշխատեն սանիտարական պոստերը մոտիկ ամսվա ընթացքում: Այդպիսի խորհրդակցուլթյուններում լավում են սանպոստերի առանձին պետերի հաշվետուլթյունները և այդ հաշվետուլթյունների հիման վրա նոր ցուցումներ են տրվում այն մասին, թե սանիտարական պոստի իր ձեռնարկուլթյան մեջ ինչ աշխատանք և ինչպիսի մեթոդներով պիտի անցկացնի:

Սանպոստերի աշխատանքի լավագույն որինակները պետք է դարձնել բոլոր հասարակական սանպոստերի սեփականուլթյունը:

Յեթե կոմիտեները սահմանափակվում են միայն սանպոստեր ջոկելով, իսկ հետո նրանց թողնում են ինքնազուլթյուն աշխատելու, ապա, իհարկե, այդպիսի սանպոստերից չի կարելի կազմակերպված և արդյունավետ մասսայական-առողջացման աշխատանք սպասել:

Սանիտարական պոստերի խնդիրներն ու պարտականուլթյուններն ավելի մանրամասնորեն պարզելու համար, անհրաժեշտ է ղեկավարվել սանիտարական պոստի մասին յեղած կանոնադրուլթյամբ:

Մի քանի որինակներ բերենք, վորոնք ցույց են տալիս, թե

Կարմիր Սաչի սանպոստերն ինչպիսի արդյունքներ են ապլիս, յերբ նրանք կանոնավոր դեկավարուեթյուն են ստանում ձեռնարկություններ ի կոմիտեներից :

Գորկի քաղաքում Խորհրդային Միութան ամենախոշոր ավտոմոբիլային գործարաններից մեկում, փականադործական-մոտորային ցեխում աշխատում է Կարմիր Սաչի սանիտարական պոստը, այդ ցեխի սանպոստի պետ ընկ. Գրաչեվայի գլխավորությամբ :

«Փականադործական-մոտորային ցեխում», — պատմում է Գրաչեվան, — «մենք հասել ենք նրան, վոր լավագույն հովա-հարիչ են սարքել: Աշխատանքից հետո մենք պալիս ենք նայելու, թե ինչպես են մաքրում դադըյահները: Թույլ չենք տալիս, վոր ծխախոտի ավելցուկները կամ լուցիկները դցին հատակին: Մեր պահանջով ցեխերում ջրով լի տակառներ են դրված, իսկ մինչ այդ բանվորները ձեռքերը լվանում ելին այն ջրով, վորը պիտի հատկացվի ներկարարական աշխատանքների համար:

Մեր սանպոստի ակտիվը Կարմիր Սաչի շնորհամերն են — մեր ցեխի 27 բանվորները: Յես հաճախ անցնում են իմ ցեխի միջով, ճաչի ընդմիջումների ժամանակ անց եմ կացնում խմբակային դրուցներ, հրահանգավորում եմ ակտիվին:

Մոսկվայում № 4 հացի գործարանում Կարմիր Սաչի յանիտարական պոստերն իրենց աշխատանքի ընթացքում սերտորեն կապված են առողջապահական կայանի հետ: Սանպոստերի աշխատանքը դեկավարում է որինակելի կազմակերպիչ, ՌԿՄԸ գործարանային կոմիտեյի անդամ ընկեր Սավինովը:

Ահա, թե նա ինչ է պատմում. «Մեր գործարանում առողջապահական կայանները լրջորեն ոգնում են Կարմիր Սաչին: Մեր գործարանը սնունդի գործարան է և այստեղ հատկապես պահանջվում է առողջապահության պահպանումը: Սանպոստերը պարզորոշ և լավ են աշխատում. նրանք իրենց ուշադրությունը մոբիլիտացիայի յեն յենթարկել մաքրության հարցերի շուրջը: Այժմ գործարանի ցեխերում որինակելի մաքրություն է տիրում: Ահա, թե ինչ են արել մեզ մոտ սանպոստերը»:

Սանպոստերը վոչ միայն պայքար են մղում մաքրության համար, այլ և առաջին բժշկական ողնություն են ցույց տալիս:

Մոսկվայում «Ելեկարոպոլոդ» գործարանում ընկ. Զիզմանը հասել է նրան, վոր սանպոստերը գործարանի բանվորներին առաջին ողնություն են ցույց տալիս: Յուրաքանչյուր սանպոստունի իր դեղարկիչը, պատգարակը, որապահ ողակավորների ցուցակը և առողջապահական կայանի և շատ ողնության կայանի հեռախոսների համարները: Որապահ սանպոստը թեև վրա կըլում է Կարմիր Սաչի նշանով կապը և ամեն ըտպե պատրաստ է առաջին ողնություն ցույց տալու, իսկ յեթե ինքը չի կարողանում այդ կատարել, ապա նա անմիջապես բժշկի յե հրավիրում: «Ելեկարոպոլոդ» գործարանում սանպոստերի աշխատանքի հաշվառում է կատարվում:

Յուրաքանչյուր դեղարկիչի մոտ մի տետրակ է պահվում, վորի մեջ դրանցում են յուրաքանչյուր վիրավորում և դրվում, թե ինչպես է ցույց տրվել առաջին ողնությունը: Դեղարկիչը մյուս հերթափոխերին հանձնելու ժամանակ, սանպոստի պետը դրում է, թե ինչ վիճակումն է հանձնում դեղարկիչը: Բուժարանից բժշկական քույր է կցվում, վորն ամեն ոք շրջապայում է և ստուգում է բոլոր դեղարկիչները, թե ինչ դեղորայք են պահատում և այդ մասին հայտնում է կոմիտեյի նախագահին: Գործարանի դիրեկտորը, կուսկոմիտեն և գործարկումը շատ դոհ են ցեխերում Կարմիր Սաչի սանպոստերի տարած աշխատանքից:

«Ռուձուտակի անվան» գործարանում (Լենինի շրջան) գոյություն ունի Կարմիր Սաչի նույնպես ամուր կազմակերպություն, վորի գործարանային կոմիտեյի նախագահն է ընկ. Կոզակեվիչը:

«Գործարանում Կարմիր Սաչի պլանային մասսայական-առողջապահական աշխատանք է անցկացվում: Առողջապահական աշխատանքը, —ասում է ընկ. Կոզակեվիչը, —մտցված է գործարանի կազմակերպությունների պլանի մեջ: Մեզ մոտ սանբրերանի կազմակերպությունների պլանի մեջ: Մեզ մոտ սանբրերանի կան, վորոնք կցված են հանրակացարաններին, ճաշարաններին և ցեխերին: Յեխերում սանպոստեր կան, վորոնք պայքար են մղում բանվորական տեղի, դադըյահի մաքրության համար, դնում են հագուստը, վորտեղ հարկավոր է ախտահանում են: Սանպոստերը հայտնում են ինձ նկատված թերությունները: Յեթե ցեխի պետն անց է կացնում այս կամ այն միջոցառումը, մենք անարյամանորեն մասնակցում ենք այդ աշխատանքին:

Մենք առողջապահական աշխատանք ենք տարել դործարանի մերձքաղաքային տնտեսութեան մեջ, մասնակցել ենք քաղհանի և Ծանրքի կամպանիաներին: Այնտեղ դործարանային սանպոստեր կային, վորոնք բժշկական ոգնութիւնն էին ցույց տալիս ամառային պայմաններում: Այնտեղ այդ ոգնութիւնն անհրաժեշտ է եղել, վորովհետեւ մերձքաղաքային տնտեսութեան համար հասկացված է յեղել նախկին աղբանոցը: Այդ աղբանոցում գետնի մեջ շատ ապակու կտորներ են յեղել: Ամառվա ընթացքում ոգնութիւնն հասցնելու 200 դեպք է յեղել վիրավորումները և կտրվածքի վերքեր ստանալու ժամանակ: Վոչ մի վերքի կեղտոտում, վոչ մի Ֆլեգոնա չի յեղել, վորովհետեւ բժշկական ոգնութիւնը ժամանակին և հմտորեն է հասցվել:»

Սանիտարական պոստերի աշխատանքի որինակները չափազանց համողեցուցիչ կերպով ապացուցում են սանիտարական պոստերի կազմակերպման կարեւորութիւնը և հասարակական սանիտարական պոստերը կոնկրետ ու դործնական կերպով դեկաւարելու անհրաժեշտութիւնը, վորովհետեւ վատ սանպոստեր չկան, այլ կան Կարմիր Սաչի հասարակական սանպոստերի աշխատանքի վատ դեկաւարներ:

Հանձնես սանիտարական պոստերի մենք՝ ակտիվիստների հակայական բանակ ունենք, վորոնք պայքար են մղում մաքրութեան, աշխատանքի ու կենցաղային պայմանների առողջացման համար: Կարմիր Սաչի հասարակայնութեան նախաձեռնութիւնն ու ինքնադործունեյութիւնը մասսայական – առողջապահական աշխատանքի դեռ քիչ ձևեր չեն առաջադրել. այստեղ կան՝ թե՛ «սանիտարական շտուրմներ», թե՛ «արշավներ մաքրութեան համար», թե՛ «սանիտարական շաբաթորակներ»: Բայց կանոնավոր մասսայական – սանիտարական աշխատանքն ամենից հաջողանց են կացնում Կարմիր Սաչի ակտիվիստները միասնական սանիտարական որվա ձևով, վորը կազմակերպվում է կանոնավոր կերպով յուրաքանչյուր տասնորակում բոլոր հանրակացարաններում ու տներում, վորտեղ ապրում են բանվորները:

Պետք է ձգտել, վոր միասնական սանիտարական որը Կարմիր Սաչի սկզբնական կազմակերպութիւնների վողջ մասսայական-առողջապահական աշխատանքի հիմնական բովանդակութիւնը դառնա թե՛ Փարբիկայում ու դործարանում և թե՛ մանավանդ կոլտնտեսութիւններում ու խորհանտեսութիւններում:

Ինչպե՞ս է անցկացվում միասնական սանիտարական որը:

Իբրև որինակ բերում ենք մի այդպիսի որվա նկարագրութիւնը, վոր անց է կացվել Մոսկվայի մարզի Վոսինոստրովսկայա ավանում բեռնիչ բանվորների քարակներում:

Բանվորները, լավ անցկացրած բացատրական աշխատանքի, ակտիվի ճես ունեցած նախնական զրույցների շնորհիվ, հիմնաւի և ժամանակին իրադել են յեղել առաջիկա միջոցառումների բնույթի մասին:

«Այսոր մեղ մոտ առաջին սանիտարական որն է»: Դրան տեղյակ է յեղել ավանի վողջ բանվորական մասսան:

«Մանորը» սկսվել է առաւոտյան ճիշտ ժամի 7-ին: Սկսեցին ուղղակի ձյան վրա դուրս բերել ներքնակները, մահճակալները, վերմակները: Մի ժամից հետո բարակի մոտ կանգնած էլին սայլերը, վորոնց վրա բարձվեցին բոլոր իրերը և ուղարկեցին վազոն ախտահանարանը:

Իրերն ախտահանման յենթարկելու ժամանակ, Կարմիր Սաչի հատկապես հրապիրած վարսավիրները հենց այստեղ էլ կատարեցին գլուխները խուզելն ու թրաչեցին միրուքները, այսպիսով բանվորներն ազատվեցին հերթերից ու վարսավիրանոց դնալուց: Սուղվածների և թրաչվածների առաջին խումբը ժամի 10-ին արդեն բաղանիք էր դնում:

Շենքերի վերակացու ընկ. Շիբայեվը բաղանիքը պատրաստել էր թաղամասի բանվորներին անընդհատ սպասարկելու համար: Բաղանիքը լավ էր տաքացված և լավ մաքրած էր՝ բանվորները հաճուքով լողացան, յուրաքանչյուր լողացողին մի-մի կտոր սապոն էր տրված: Բարակում ապրող բանվորուհիները նույն ժամանակամիջոցին լվացին բարակի բոլոր հատակները, սրբեցին պատերը, մաքրեցին փոշին, վերցրին սարդոստայնը, յետացրած ջրով խաչեցին մահճակալները նրանց մեջ յեղած միջատները վոչնչացնելու համար:

Յերբ տղամարդիկ վերադարձան բաղանիքից, հերթը կանանց հասավ: Նույն կարգով, կազմակերպված ձևով լողացան նաև նրանք: ժամի 2-ին բոլոր իրերն արդեն բերված էլին ախտահանարանից: Իրերն անվնաս էլին և իրենց տեղերը դրված: «Մանորը» կազմակերպված անցավ առանց աղմուկի, առանց կամպանեականութեան: Պարզ կերպով, բայց առաջուց խնամքով նախամտածված էլին միասնական սանիտարական որվա բո-

լոր մանրամասնութիւնները, և այդ պատճառով ել այդպէսի լավ արդշունք ստացվեց:

Բաղանիքում լողացան 400 մարդ, մաղերը խուլեցին 700 մարդ, ախտահանման յենթարկվեցին 800 ձեռք անկողինների պատկանիք:

Բանվորները հաճուքով տեղավորվեցին մաքուր, լվացված մահճակալներէ, նոր ներքնակներէ վրա (հին ներքնակներէ մի մասը նորերով փոխարինեցին):

Հետևյալ միասնական սանիտարական որը նշանակված էր 10 որից հետո: Իսկ հիմա, յերբ բանվորները յուրացրին և դնահատեցին «միասնական սանտոր», «սանտրն» արդեն սպահովված էր: Կանոնավոր կերպով, տասնորյակում մեկ անգամ, միասնական որը կազմակերպված անցկացնելու և սանիտարական ստուգման միջոցով, յուրաքանչյուր բարակում մշտական մաքրութիւն, կարգուկանոն և սպահանջով:

Մեր կազմակերպութիւնները նույնպես փորձ ունեն նորահատուցներում միասնական «սանտրն» անցկացնելու գործում, վորտեղ այդպիսի միջոցառումը, ինչպիսին է միասնական «սոնոր» հատկապես, հարկավոր է:

Այդ փորձն անպայման արժանի յե մեր ուշադրութեան:

«Մոսկովա—Դոնբաս» շինարարութեան միասնական սանիտարական որն առաջին անգամ անց է կացվել Ռժերելյե, Կաշիրա, Վորոնեսք գծամասերում և խոշոր նշանակութիւն է ունեցել շինարար բանվորների առողջ կենցաղի համար պայքարի գործում:

Միասնական որվա ընթացքում բարակներում ապրող բանվորների ուժերով մաքրվել են թե՛ բարակները և թե՛ նրանց դրաված տեղամասը, նրանք լվացին հատակները, սրբեցին սպտուհանների ապակիները, թափ տվին ներքնակներէ, և անկողիններէ փոշին, ներքնակներէ համար բերեցին թարմ ծղոտ, ռազմա-սանիտարական գիտելիքներէ 4 խմբակ կազմակերպեցին, մեծ թվով ակտիվիստներ հավաքադրվեցին ՌԿՍԸ անդամութեան մեջ:

Միասնական սանիտարական որվա ակտիվ անցկացմանն ակտիվ մասնակցութիւն ունեցան գծամասերի բանվորներն ու բանվորուհիները: Խոշոր դեր խաղացին լավագույն հարվածախնները՝ Պուրեկեհոնը, Պեկինը, Պոլոչինցեվան, Յարովյան,

Լեմեչկոն, վորոնք իրենց որինակով սպահովեցին միասնական սանտրվա հաջողութիւններ:

Բոլոր բարակներում, նրանց մաքուր և հասակ վիճակում սպահելու համար, միաժամանակ ՌԿՍԸ ընկերութեան սանպոստեր կազմակերպվեցին:

Սանիտարական որն ամենից հաջող անցավ քաղաքային շինարարական գծամասում (բժիշկ Իվանովա): Այնտեղ բոլոր բանվորները լիակատար սանաչակում անցան (մաքերը խուլեցր, բաշանիք):

Այդ վողջ աշխատանքն անցկացնելիս, պետք է հաշվի առնել, վոր այդ ձեով Կարմիր Խաչի հասարակագիտութիւնը, վոչ թե խոսքով, այլ գործնականում կյանքում կիրառում է մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ցուցումները:

«Այժմյան բանվորը, մեր խորհրդային բանվորը ցանկանում է ապրել, իր բոլոր նյութական և կուլտուրական սպահանջները բավարարելով, թե պարենավորման մատակարարման իմաստով, թե բնակարանների իմաստով և թե կուլտուրական և ամեն տեսակի այլ սպահանջների սպահովման իմաստով:

Դրա համար նա իրավունք ունի, և մենք պարտավոր ենք ապահովել այդ պայմանները նրա համար»:

Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) գործնական հասարակական մասսայական – առողջապահական աշխատանքով ամենից լավ է կենսագործվում ընկեր Ստալինի այդ ցուցումը:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ-ԿԵՆՑԱԴԱՅԻՆ ՅԵՎ ԲՈՒԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Յերկրի սանիտարական պաշտպանութիւնն ամրապնդելով, Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) կազմակերպութիւններն ըզբաղվում են վոչ միայն կադրերի պատրաստման գործով ու մասսայական-առողջապահական աշխատանքով, այլ և գույքի կուտակումով, վորն անհրաժեշտ է խաղաղ ժամանակ հիվանդներին և վիրավորներին սպասարկելու, մասսայական-սանիտարական մշակումներն անցկացնելու համար:

Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) կազմակերպութիւնները պետք է լավ սարքավորված լինեն: Նրանց տրամադրութեան տակ այնպիսի հիմնարկներ պիտի լինեն, վորոնք արժեքավոր են սանիտարական պաշտպանութեան տեսակետից:

Այդպիսի հիմնարկների թվին են պատկանում լվացքատնե-
րը, բաղանիքները, դուշային հաստարանները, վարսավիրանոց-
ները, ախտահանման բյուրոները, բժշկական կայանները, պո-
լիկլինիկաները, բուժարանները, հիվանդանոցները:

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեների կողմից բաց
արված բոլոր սանիտարական-կենցաղային և բուժական հիմ-
նարկներին պետք է առաջադրել հետևյալ հիմնական պահանջնե-
րը:

1. Համապատասխանել սանիտարական պաշտպանություն
ամբողջական պահանջներին:

2. Բարձրացնել իրենց կոլեկտիվի բնավորների սանիտարա-
կան - կենցաղային սպասարկման վորակը, ոժանդակել իրենց
ձեռնարկություն, խորհրդատեսություն, ՄՏ կայանի, կոլտնտե-
սություն սանիտարական վիճակի հետագա ամրապնդումը:

Որչոր բժշկա-սանիտարական հիմնարկների՝ պոլիկլինիկա-
ների, հիվանդանոցների, մշտական մահճակալներով ստացիո-
նարների, ախտահանման բյուրոների, շրջան յեկողների համար
իջևանների կազմակերպումը՝ Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի)
շրջանային կոմիտեների ուժերին համապատասխան խնդիր է:
Իսկ սանիտարական - կենցաղային և բժշկական հիմնարկների,
որինակ՝ վարսավիրանոցների, բժշկական կայանների, դուշա-
յին հաստարանների կազմակերպումը — հանդիսանում են նաև
ամեն մի գործարանի, Փարբիկայի, բնավորական ավանի, խորհ-
տնտեսություն, կոլտնտեսություն և ՄՏ կայանի Կարմիր Սաչի
(Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպություն իրագործելի
խնդիրը:

Մոբիլիտեսություններում և կոլտնտեսություններում մեծ
նշանակություն ունեն Կարմիր Սաչի խրճիթները, վորտեղ պետք
է բացվեն առաջին ողնություն կայանները, Կարմիր Սաչի քույ-
րերի գլխավորությունով: Բացի այդ, այդ խրճիթներում պետք
է լինել մահճակալ հիվանդներին ամենամոտիկ յենթաշրջանա-
յին հիվանդանոց վորտեղ ելլել տեղավորելու համար:

Իրա համար անհրաժեշտ շենքերի ընտրումը, նրանց կահա-
վորումը, Կարմիր Սաչի խրճիթը պահելու համար միջոցներ հա-
վաքելը, առաջին ողնություն կայանների համար բժշկական
քույրերի ընտրությունը և այդ կայանների ղեկավարումը, այդ
բոլորը պետք է կազմի խորհրդատեսություններ, կոլտնտեսու-

թյունների, ՄՏ կայանների Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի)
կոմիտեների բժշկա-սանիտարական աշխատանքի բովանդակու-
թյունը:

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) հիմնարկները պետք է ո-
րինակելի, մաքուր ու կարգին պահվեն, նրանք ամբողջապես
պետք է համապատասխանեն սանիտարական բոլոր կանոնե-
րին:

Կարմիր Սաչի վարսավիրանոցների սպիտակեղենները պետք
է մաքուր լինեն, վարսավիրները պետք է մաքուր հաղնվեն,
վարսավիրանոցների գործիքներն ու պատկանելիքները միանգա-
մայն սարքին ու մաքուր պիտի լինեն: Նույն պահանջները՝ մաք-
րություն ու կուլտուրական բովանդակություն, պետք է պա-
հանջել Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) նաև մյուս բոլոր գոր-
ծող հիմնարկներից:

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) հիմնարկներն որինակելի
վիճակում պիտի լինեն, անկախ նրանից, թե ում միջոցներով և
ինչ ուժերով են նրանք կազմակերպված:

Կարմիր Սաչի բուժական և սանիտարական - կենցաղային
հիմնարկների բացումը պատրաստելու պրոցեսում անհրաժեշտ է
հաշվի առնել, վոր այդ հիմնարկները միայն այն ժամանակ կա-
րելի յե բաց անել, յերբ դրա համար թույլտվություն կտա Պե-
տական սանիտարական տեսություն ներկայացրելը:

Սանիտարական - կենցաղային հիմնարկների ստեղծման նա-
խապատրաստական աշխատանքներն անցկացնելը, նրանց կազ-
մակերպումը, բացումն ու շահագործումը՝ Կարմիր Սաչի կոմի-
տեների պրակտիկ գործունեություն ամենաբովանդակալից,
վատ ու հեաաքքերի կողմերից մեկն է:

Այդ աշխատանքի ընթացքում ստուգվում են հասարակայնու-
թյան ուժերը, նրա կարողությունը խոշոր կուլտուրական-սո-
ցիալական հիմնարկներ կազմակերպելու համար: Ինչպես Կար-
միր Սաչի ամբողջ հասարակական աշխատանքի ընթացքում,
այնպես էլ այստեղ հիմնականում ամեն ինչ վորոշվում է հիմ-
նարկի ղեկավարի ճիշտ ընտրությունով, նրա տնտեսական ըն-
դունակություններով, նրա կողմից գործին տիրապետելու մի-
ջոցով, վորովհետև այդ հիմնարկները պետք է աշխատեն խիստ
տնտեսական հաշվարկի կարգով:

Կոմիտեները հատուկ խնամքով ու լրջմտությամբ պիտի մո-

տենան նրանց կողմից ստեղծած հիմնարկի՝ վարսավիրանոցի, լվացքատան, բժշկական կայանի և այլոց ղեկավարի ընտրութեանը:

Քիչ չեն ժուրիկներն ու խորթ տարրերը, վորոնք պատահաբար սողոսկում են Կարմիր Սաչի հիմնարկները և ուզում են ոգտվել հասարակական միջոցների հաշվին, նրանք ակտիվիստներին դիմակի տակ փորձում են ձեռք բերել կոմիտեյի վստահութունը և Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) անվան տակ կատարում են իրենց հանցավոր գործերը, հարիչտակելով հասարակական միջոցները:

Խիստ վերահսկողութունը, լայն հասարակայնութունը, բանվորական մասսային հաշվետու ղեկուցում տալը, աշխատողների անձնական կազմի ուսումնասիրութունը, Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) հիմնարկների աշխատանքի բոլոր մանրամասնութուններին հետևելը կիանխեն հնարավոր չարագործութունները:

Անհրաժեշտ է աշխուրջ հետևել կոմիտեյի կողմից կազմակերպված հիմնարկների աշխատանքին և հաստատ հիշել, վոր Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) հիմնարկների աշխատանքով ու զբվածքով բանվորական և կոլխոզային մասսան դատում է տվյալ ձեռնարկութեան, խորհանտեսութեան և կոլտնտեսութեան Կարմիր Սաչի աշխատանքի կենտունակութեան և արժեքի մասին:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեն իր աշխատանքի պլանում պետք է միջոցառումներ նախատեսի կապ հաստատելու համար Կարմիր Բանակի այն զորամասերի հետ, վորոնք մտտիկ են գտնվում և հայտնի չեն բանվորական կամ կոլտնտեսային մասսային:

Կարմիր Սաչի կազմակերպութունների և կարմիր զորամասերի միջև հաստատված այդ կապը պետք է ուղղված լինի կարմիր բանակայինների և Կարմիր Սաչի ակտիվի իրար մերձեցմանը, Կարմիր Սաչի լավագույն ակտիվիստներին և պատրաստված կազմերին մոտիկից ծանոթացմանը կարմիր բանակային զորա-

մասի կյանքին ու կենցաղին և յուրաքանչյուր կարմիր բանակայինի կյանքին ու կենցաղին մասնախորապես:

Կարմիր Սաչի կազմակերպութունները, վորոնք կոչված են պատերազմի ժամանակ իրենց վրա վերցնելու հիվանդ և վիրավոր կարմիր բանակայինների հոգատարութունը, արդեն ներկայումս, խաղաղ սոցիալիստական աշխատանքի պայմաններում, պարտավոր են դաստիարակել իրենց անդամների մասսան՝ ղեպի Կարմիր Բանակը սիրելի վերաբերմունքի վուզով և սիրով ու հոգատարութեամբ շրջապատելու յուրաքանչյուր կարմիր բանակայինին:

ԲԳԿԻ զորամասերի հետ կապ հաստատելու պլանային աշխատանքը պետք է իր մեջ պարփակի հետևյալ միջոցառումները:

1. Զրույցներ ԲԳԿԻ զորամասերում Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) նշանակութեան և աշխատանքի մասին:
2. Կարմիր բանակայինների և Ֆարքիկաների, դործարանների, խորհանտեսութունների, ՄՏ կայանների և կոլտնտեսութունների սանիտարական պաշտպանութեան հարվածայինների ընկերական հանդիպումներ անցկացնելը:
3. Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) անդամներ հավաքագրելը թե՛ շարքային և թե՛ հրամատարական-քաղաքական կազմին և նրանց ընտանիքների անդամներին:
4. «ՊԱՄՊ» խմբակների կազմակերպում՝ կարմիր բանակայիններին ռազմա-սանիտարական գործը սովորեցնելու համար:
5. Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կազմակերպութեան գործնական ոժանդակութունը՝ կարմիր բանակայինների հագուստը կարելու և նորոգելու գործում:
6. ԲԳԿԻ զորամասերի Կարմիր Սաչի լավագույն հարվածայինների պարզեցումը:
7. Իր զորամասի հրամատարական կազմի ամբողջումը Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) սանիտարական գրուժինաներին:
8. Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) անկյունների և սանիտարական ցուցահանգեսների կազմակերպումը զորանոցներում, լազերներում:
9. Կարմիր բանակայինների հետ միասին յենթաչեֆ կոլտնտեսութունները մեկնելը:
10. ԲԳԿԻ զորամասի հրամակազմի մասնակցումը Կարմիր

Պաշի (Կարմիր Մահիկի) սանիտարական գրուփինաների սանիտարական տակտիկական պարապմունքներին :

ԲԳԿԲ գործառնների հետ կապ պահպանելու ուղղութեամբ մեր աշխատանքի հարուստ փորձը ցույց է տալիս, վոր Կարմիր Պաշի ակտիվի ուժերով կարելի չէ ԲԳԿԲ գործառններին խոշոր և լուրջ ոգնութիւն ցույց տալ, վոր ԲԳԿԲ գործառնների հետ սերտ կապը՝ Կարմիր Պաշի (Կարմիր Մահիկի) կազմակերպութիւնները համար հիանալի մեթոդ է հանդիսանում, Կարմիր Պաշի (Կարմիր Մահիկի) ակտիվի դաստիարակման ու նրանց հեղինակութիւնը բանփորական մասսայի մեջ ամրացնելու համար :

Առանձին է դրված գորակոչիկները հետ տարվելիք աշխատանքի հարցը : Յուրաքանչյուր գործարան և կոլտնտեսութիւն ամեն տարի հանձնում է Կարմիր բանակին գորակոչիկ յերիտասարգութեամբ սովորեցնելու համար : Գրեթէ յուրաքանչյուր հասարակական կազմակերպութիւն ձգտում է հատուկ աշխատանքի միջոցով բարձրացնել գորակոչիկի այս կամ այն հատկութիւնները ԲԳԿԲ ծառայութեան համար : Մեր հասարակայնութեան խնդիրն է՝ բոլոր միջոցները ձեռք առնել, վորպէսզի Կարմիր Բանակի հերթական համալրումը հրաշալի առողջութիւն ունենա : Դրա համար սկզբնական կազմակերպութիւնները ժամանակին անց են կացնում գորակոչի յենթակա յերիտասարգութեան բժշկական քննութիւնը, ոգնում են բուժման կարիք ունեցողներին բարելավելու իրենց բժշկութիւնը, ծանոթանում են յուրաքանչյուր գորակոչիկի կենցաղին, միջոցներ են ձեռք առնում, վորպէսզի գորակոչիկը վաղորոք կանոնադր կյանք վարի և ապահովված լինի նորմալ քնով, ժամանակին սնվի և մշտապես հանդիստ ունենա : Միաժամանակ սկզբնական կազմակերպութիւնները պետք է նախակոչիկներին պատվաստեն ռազմա-սանիտարական ունակութիւններն ու գիտելիքները :

Նախակոչիկներից պետք է կազմակերպել «ՊԱՍՊ» խմբակներ այն հաշվով, վոր մինչև Կարմիր բանակի գորակոչը բոլոր գորակոչիկները «ՊԱՍՊ» կրճքանշանակիրներ դառնան :

Նախակոչիկների հետ տարվելիք աշխատանքի կարողով պետք է անցկացնել բժիշկ-մասնագետների զրույցներ ու դասախոսութիւններ՝ յերթի առողջապահութեան, բժշկական վերահսկողութեան, սանիտարական հետախուզութեան մասին : Նախակոչիկ-

ներից պետք է դաստիարակել Կարմիր Պաշի մշտական ակտիվ :

Զորակոչիկները և կարմիր բանակայինների հետ տարվելիք հնարավոր աշխատանքը ստեղծում է բոլոր նախադրյալները՝ կարմիր բանակայիններից Կարմիր Պաշի (Կարմիր Մահիկի) լավ և կայուն ակտիվ աճեցնելու համար : Այդ ակտիվը Կարմիր բանակից վերադառնալուց հետո, հաճախ շրջանների մեր կոմիտեների հիմնական կազմակերպիչն է լինում գործարաններում, խորհրդատեսութիւններում, կոլտնտեսութիւններում և ՄՏ կայաններում, վորտեղ ապրում և աշխատում են գորացրված կարմիր բանակայինները :

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԵՋ

«Անցնել առողջ ու կենսուրախ, մեր յերկրի հզորութեամբ պատշաճ բարձրութեան հասցնելու և նրան բշխամիների վտանգութեամբ յուրմեքից իրենց կրճեով պաշտպանելու ընդունակ բանվորների նոր սերունդը» :

(ՄՍԱԼԻՆ)

Մեր յերկիրը միակն է աշխարհում, վորտեղ աշխատավորների յերեխաների դաստիարակութիւնը, պահպանութիւնը և նրանց առողջութեան ամրապնդումը պետական կարեւորագույն խնդիրներից մեկն է կազմում :

Կուսակցութիւնը, Կոմյերիտիութիւնը և խորհրդային վողջ հասարակայնութիւնն ամենորայ հոգատարութիւն են ցուցաբերում կոմունիստական աճող սերնդի առողջացման համար :

Մեր յերկիրը հազարավոր մանկական սանատորիաներ, պիոներ-լազերներ, մանկհարպարակներ ունի, վորոնք ցրված են ամենահեռավոր ծայրամասերում :

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը պիոներական կազմակերպութեան տասնամյակի կապակցութեամբ իր վորոշումով մատնանշել է, վոր յերեխաների մեջ առողջացման միջոցառումներ անցկացնելը, պետք է դառնա Կարմիր Պաշի (Կարմիր Մահիկի) ընկերութեան հիմնական խնդիրներից մեկը :

Մեր ընկերութեան սանատորիական լազերներում 1934 թը-վին ամրապնդել են իրենց առողջութիւնը 10,772 պիոներներ,

Արտեկի (Դրամ) տաք արեզակն ու սիրալիբ ծովը, Կարմիր
Խաչի (Կարմիր Մահիկի) համամիութենական պիտոներական առ-
բաժինները հարցուրավոր յերեխաներ են դիմավորում և ճանա-
պարհում : Յեղպատորիայի վոսկրա-տուբերկուլյոգային սանա-
տորիան առողջ կյանքի, ուսուցման և խաղերի յե վերադարձը-
րել հարցուրավոր հիվանդ յերեխաների :

Յերեխաների մեջ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկե-
րության կողմից տարվելիք աշխատանքի հիմքը պիտի ծառայեն
հետևյալ մոմենտները .

ա) Մանկական առողջապահական հիմնարկների կազմակեր-
պումը .

բ) Մի շարք պրոֆիլակտիկ (կանխիչ) միջոցառումներ անց-
կացնելը .

գ) Յերեխաներին սանիտարական-առողջապահական ունա-
կություններ պատվաստելը .

դ) Յերեխաների իրենց ինքնազործունեյության, նախաձեռ-
նության կազմակերպում, մեր յերկրի սանիտարական պաշտպա-
նության (սանպոստեր, սանդրուժինաներ, «Յեղիբ պատրաստ
սանիտարական պաշտպանության» նորմաների հանձնում) յերի-
տասարդ հարվածայինների դաստիարակում :

Այդ խնդիրները իրագործումը պետք է իր արտացոլումը
գտնի յուրաքանչյուր գործարանի, Փարբիկայի, կոլտնտեսու-
թյան, բնակվարձկոտպի Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) սոո-
րին և սկզբնական կազմակերպությունների ամենորյա աշխա-
տանքում :

Ձեռնարկությունների մեծ մասն իրենց բանվորների յերե-
խաների համար կազմակերպում են մանկահրատարակներ, մը-
սուրներ, ամառային լազերներ : Այդ կապակցությամբ Կարմիր
Խաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեյի վրա մի շարք կարևոր խըն-
դիրներ են դրվում : Նա պետք է ապահովի անհրաժեշտ քանա-
կությամբ զեղարկիչներ, սանիտարական պայուսակներ և այլն,
կանցկացնի յերեխաների սանիտարական մշակումը, բացատրա-
կան աշխատանք տանի ծնողների մեջ, առողջապահ. հիմնարկ-
ներն ապահովի Կարմիր Խաչի բժշկական քուլյերով, յերեխանե-
րին սանիտարական-առողջապահական ունակություններ պատ-

վաստելու բացատրական աշխատանքի միջոցով (դասախոսու-
թյուններ, դրույցներ լազերում) :

Պրոֆիլակտիկ միջոցառումներն ապահովելու համար անհը-
րաժեշտ է վոր կոմիտեն յերեխաների ակտիվի միջոցով սիստե-
մատիկաբար սուուզի, թե արդյոք կատարվո՞ւմ են պատվաս-
տումներ զանազան հիվանդությունների դեմ, հսկել և սուուզել
դպրոցի սանիտարական - առողջապահական վիճակը, յեղներով
սահմանված հրահանգները :

Պատվաստել բանվորների և կոլտնտեսականների յերեխանե-
րին, սանիտարական կուլտուրա, աշխիքն՝ նրանց ավելի քիչ
ղգայունակ դարձնել հիվանդությունների նկատմամբ, պայքարել
առողջ յերեխայի համար :

Այստեղ անհրաժեշտ է պայքար մղել ծխախոտ ծխելու
դեմ, մաքուր թաշկինակի համար, կարճ խուզած յեղունգների և
մազերի համար, հաճախակի բաղանիք հաճախելու համար, մա-
քուր հազներու և անկողնի սպիտակեղենը ժամանակին փոխելու
համար : Այս հարցերի շուրջը պետք է լայն մասսայական աշխա-
տանք ծավալել, հենվելով Կարմիր Խաչի անդամ ծնողների և յե-
րեխաների ակտիվի վրա :

Հանձնարարելի յե սոցմրցակցություն կազմակերպել Կար-
միր Խաչի անդամ ծնողների միջև՝ յերեխայի սանիտարական-
կուլտուրական դաստիարակման, սանիտարական յերեկույթների
կազմակերպման, յերեխաների համար զրավիչ և հետաքրքիր ձե-
վով սանիտարական վիկտորինաներ անցկացնելու համար : Վեր-
ջինս պետք է ամենից հաճախ կազմակերպել բնակվարձկոտպնե-
րում, կոլտնտեսության խրճիթ-ընթերցարանում :

Սկզբնական կազմակերպության վողջ աշխատանքը յերեխա-
ների մեջ պետք է հիմնված լինի մանկական լայն ինքնազործու-
նեյության և նախաձեռնության վրա, կոմիտեիտական կազմա-
կերպության և Կարմիր Խաչի կոմիտեյի վերահսկողության
տակ : Կոմիտեն պետք է ապահովի Կարմիր Խաչի (Կարմիր Մա-
հիկի) ընկերության պատանի բարեկամների խմբակների ստեղ-
ծումը՝ տվյալ ձեռնարկության (կոլտնտեսության յեղխաչեֆ
յուրաքանչյուր պիտոերջոկատում, դպրոցում կամ բնակվարձ-
կոտպում) :

«ՅեՊԱՍՊ» (յեղիբ պատրաստ սանիտարական պաշտպանու-

թյան) կրժեքանշանի սահմանումը բարձրացրել է յերեխաների հետաքրքրությունը Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) ընկերություն պատանի բարեկամների խմբակները մտնելու: Այդ հետաքրքրությունը պետք է ամրացնել ամենորյա ուշադրությամբ և հոգատարությամբ: Կարմիր Սաչի կոմիտեն պետք է ոգնի յերեխաներին՝ պատրաստելու նորմաները հանձնելու համար, դըրս համար ներգրավելով գործարանային բժշկին և բժշկական քույրին:

Կրժեքանշանակիրներին պետք է կազմակերպել սանպոստեր, վորոնց պետք է դնել դպրոցում և բնակավայրերում, իսկ 14—16 տարեկան հասակ ունեցող կրժեքանշանակիր-գերագանցիկներին՝ սանիտարական դրուժինաներ (տես «Կանոնադրությունն ու ծրագիրը մանկական սանիտարական դրուժինաների մասին»):

Վերոհիշյալ միջոցառումները յերեխաների մեջ տարվելիք աշխատանքի հիմնական ձևն է հանդիսանում, բայց դրանց ձեվերը և անցկացնելու մեթոդները կարող են ընտրվել, նայած տեղական պայմաններին, ըստ հնարավորին, այն հաշվով, վոր դրանք ամենից շատ դրավիչ և հետաքրքիր լինեն յերեխաների համար:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐԵԼ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՑԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպություն յուրաքանչյուր կոմիտե նոր տարվա սկզբին դեռ առաջ պետք է կազմի իր Ֆինանսական բյուջեն (ամբողջ տարվա համար), իր գործունեություն Ֆինանսական ծրագիրը և այդ Ֆինբյուջեն ներկայացնի վերադաս կազմակերպության՝ Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) շրջանային կոմիտեյին ի հաստատություն:

Մեր առաջ կանգնած խնդիրների կենսագործումը, մեր աշխատանքի բոլոր տեսակների պլանների և կոնտրոլ թվերի կատարումը պահանջում են՝ լավ կազմակերպված և ղեկավարից հասարակական ակտիվ ունենալու հետ միասին, ունենալ նաև դրամական միջոցներ Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեների սրամադրություն տակ:

Աշխատանքի համար անհրաժեշտ միջոցները պետք է ձարեն

Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպությունները տեղերում:

Միջոցներ գտնելն սկզբնական կազմակերպության վողջ մասաշխատանքի աշխատանքի որդանական բաղադրիչ մասն է կազմում:

Կոմիտեն իր վողջ կազմով իր ակտիվի հետ միասին պետք է ապահովի պլանների կատարումը:

Մեր սկզբնական կազմակերպությունները, իրենց նախաձեռնությամբ կարող են կազմակերպել վճարովի ներկայացումներ, դասախոսություններ և այլն իրենց գործարանում, խորհրդատեսությունում, կոլտնտեսությունում և ՄՏ Կայանում, պլանի կատարման համար պահանջվող միջոցներն ապահովելու համար:

Դրամական միջոցներն անհրաժեշտ են սանիտարական պոստերը, դրուժինաները սարքավորելու, դրականություն և դիտողական պիտույքներ ձեռք բերելու, յերեխաների մեջ աշխատանք տանելու համար: Այդ ծախքերը, վոր մտցվում են կոմիտեների Ֆինբյուջենների մեջ, պետք է ծածկվեն սկզբնական կազմակերպությունների ուժերով ձեռք բերած միջոցների հաշվին:

Սկզբնական կազմակերպության միջոցները կազմվում են հետևյալ աղբյուրներից.

ա) Անդամավճարներից, վորոնք ստացվում են Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) անդամներից:

բ) Կադրերի պատրաստման համար կատարված մուտքից՝ սահմանված չափով:

Տնտեսական կազմակերպությունների գծով:

գ) Յերեկույթներից, ներկայացումներից, կինո-սեանսներից ստացված յեկամություններից, վորոնք կազմակերպվում են ակտիվի ուժերով:

դ) Մասաշխատան-առողջապահական միջոցառումներ անցկացնելու մուտքերից (սանպոստեր, միասնական-սանիտարական որեր անցկացնելը և այլն):

ե) Կոլտնտեսություններում և խորհրդատեսություններում կատարված «Սանիտարական պաշտպանություն հեկտարների» ցանքերի միջոցներից:

զ) Վերադաս կոմիտեյի հատկացումներից:

Յեթե կառավարության հատուկ թույլտվությունը լինի, կարելի յե կազմակերպել միջոցների հավաքում հատուկ նպատա-

կի համար, ինչպիսին է, որինակ՝ սանիտարական ինքնաթիռներ կառուցելու համար:

Այդպիսի միջոցներ հալածելու միայն այն ժամանակ կարող է հաջողութուն ունենալ, յեթե դրանց կազմակերպումը պատշաճ կերպով նախապատրաստված կլինի, նույնպես և այն դեպքում, յերբ Փարբիկայի, դործարանի, խորհրդատեսության, ՄՏ Կայանի կամ կոլոնիատեսության ղեկավար կուսակցական և պրոֆմիտիթենական կազմակերպություններն անհրաժեշտ ոժանդակութուն և աջակցութուն ցույց կտան այդ դործին:

Միջոցներ հալածելու վողջ աշխատանքը պետք է անցկացընել նույն պլանով, ինչպես և մասսայական աշխատանքը՝ բացատրելով Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) նպատակներն ու ինքնդրոները, հաշվետու ղեկուցում տալով սկզբնական կազմակերպության կոմիտեյի կատարած աշխատանքի մասին:

Հավաքված միջոցների դուրսարժ պարզելուց հետո, դրամը պետք է մուտք անել և ամբողջովին մուծել վերադաս կոմիտեյի ընթացիկ հաշվին. հավաքած միջոցների արդյունքների և չափերի մասին կոմիտեն պետք է իրազեկ դարձնի վողջ միայն վողջ ակտովին, վոր մասնակցել է միջոցների հավաքմանը, այլ և ընկերության անդամների վողջ մասսային:

Մուտքերի առանձին աղբյուրների բոլոր յեկամուտները, այն է՝ անդամավճարները, պայմանադրային մուտքերը և այն ծախքերը, վոր նախատեսված են պլանով (կազմերի պատրաստության համար, մասսայական առողջապահական և ազիտմաստայական աշխատանքի համար), պետք է արտացոլվեն Կարմիր Սաչի (Կարմիր Մահիկի) սկզբնական կազմակերպության բյուջեում:

Բյուջեն մի աղյուսակ է, վորի մեջ ձախ յերեսին (մուտքում) ցույց են տրվում նախատեսված ստացվելիք յեկամուտները, և աջ յերեսին (յեկում) ծախքերը:

